44ՐԴ ՏԱՐԻ ԹԻՒ 2420 Կ. ՊՈԼԻՍ — ՈՒՐԲԱԹ 8-21 ՄԱՅԻՍ 1909 — 8 ՄԱՅԻՍ 1325-2 ՀԷՄԱՊԻ ԻԿ. ԷՎԴԷ 1327

منظومهٔ افکار ارمنیجه یومی غزته
صاحب امتیازی: (اوغانس فریه)
ادارهخانهسی — باب عالی جادهسنده نومرو ٥٤

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ԿՆԻԿ.	ՏՐԿՆ.	ՎԵՑՄՍ.
Պոլսոյ համար	80 դրս.	50 դրս.
Գաւառներու համար	108 »	60 »
Արտասահմանի »	25 ֆր.	14 ֆր.

ՅԱՅՏԱՐԱՐԱԿՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ
Մէկ անգամի համար տողը 5 դրս., մէկէ աւելի ծանուցմանց համար մասնաւոր պայմաններ

Մանկական Էֆքեար

ԱԶԱՏԱԿԱՆ ԱՆԿԱԽ ՕՐԿԱՆ

JOURNAL ARMÉNIEN
MANZOUMÉ-I-EFKIAR
54 Grand'Rue de la S. Porte, 54
Constantinople

ՏԷՐ ԵՒ ՏՆՕՐԷՆ
ՅՈՎՀԱՆՆԷՍ Ֆ. ԳԱՑՍԷՐԵԱՆ
ՈՐՈՒ Կ'ՈՒՂՂՈՒԻ ԱՄԷՆ ԳՐՈՒԹԻՒՆ

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ
ՊԱՊԸՐ ԱԼԻ ՀԱՑՑԷՍԻ, ԹԻՒ 54

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ՈՒՂՂՈՒԱԾ ԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ
ԵՏ ՉԵՆ ՏՐՈՒԻՐ

✷ 10 ՓԱՐԱ ✷ — ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՄԱՆՉԱՌՈՒՍԷ ԿԷ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԷՆ ՕՐ ԱՐԵՆԱԼՈՅՍՈՒՆ — ✷ 10 ՓԱՐԱ ✷

ԻՄ ՈՒՆԿՆԴՐՈՒԹԻՒՆՆԵՐՍ ԱՊՏԻԼ-ՀԱՄԻՏԻ ՄՈՏ

Գրեց՝ ԱԼԻ ՀԱՑՑԱՐ ՄԻՏՀԱՔ ՊԷՅ

ՎԻԵՆՆԱ, 15 Մայիս.

Անցեալ տարուան Յուլիսի դէպքերէն քիչ ետքը հայրենիքս վերադարձայ, ուրեկէց չսա տարիներս ապաստանած էի։ Վերադարձայ Սահմանադրական Թուրքիոյ ծառայութեան մէջ մտնելու համար, որուն բարօրութիւնը իմ միակ փափաքս եղած էր։ Առաջին վայրկեանէն սկսեալ մի միայն ազգին վրայ դրած էի յոյս, և անոր միայն կը վերաբերէի, եւ ոչ մէկ ուրիշ կուսակցութեան կամ քմմիթէի։ Բնութիւն կամ, աւելի ճիշդը ըսելով, անոր վարիչներուն մէկ մասը իսկոյն ինծի հանդէպ դիրք մը բռնեց, և այսպէս փոքրամասնութեան մէջ մնացի, այսինքն չյաջողեցայ երեսփոխան ընտրուիլ, թէև չորս հարիւր սոորագրութիւններով իմ ընտրելիութիւնս կը պաշտպանէր, բայց Քոմիթէի թշնամիներս բէվսրլէր ի ձեռին աշխատեցան և չյաջողցուցին։ Ես երբէք Քոմիթէին դէմ եղած չեմ, թէև իմ սահմանադրական տեսակէտս բնականաբար չէի կրնար խոստովանիլ թէ Քոմիթէն կառավարութեան յարմար տարբ մը ըլլայ։ Ամէն թախանձանքներու հակառակ Ազատական կուսակցութեան մէջ ալ չմնայ, որ արդարև խիստ գեղեցիկ դաւափարներ կը պարզէր, որուն վարիչ անձնասուրութիւնները սակայն Քոմիթէին վարիչներուն չտարէրէն նուազ վտառութիւն կը նեբրնչէին ի մասին իրենց քաղաքական գործունէութեան։ Ուստի Թուրքիոյ մէջ իմ վեցամսեայ բնակութեանս մէջ՝նչէն կուսակցութիւններէ դուրս մնացի և լուռ հանդիսատես եղայ ա՛յն մեծ դէպքերուն առեն, որոնք յանգեցան պետական հարուածին և Բեամիր փաշայի անկումին ու վերջ ի վերջոյ Ապրիլ 13էն (Ն. Տ.) հակայեղափոխութեան։

Անվարան կերպով վստահաբար դիտեմ թէ հօրս՝ Միտհաթ փաշայի դէմ մահվիճրէն ոտկ Բեամիլ փաշայի ստորադրութիւնն ալ կայ։ Բեամիլ չնորհակալութիւն կը պարտէր իմ հօրս, որովհետև Միտհաթն էր որ Բեամիլը Հալէպի կառավարիչ անուանած էր Վէզիրի տիտղոսով։ Բայց Բեամիլ ամէն բանէ առաջ պատրաստ էր Սուլթանին ծառայութիւն մատուցանել։ Այսու հանդերձ, ինք անձամբ Ապտիլ Համիտ, երբ օր մը գայլի իսկայնիլ իրեն հետ, ձեռքի նշանակալից շարժումով մը բաւ ինծի.—«Գիտէք արդէն թէ Բեամիլ էնթրիկան մէն է։» Եւ Բեամիլ ինչպէս որընդհանրապէս էնթրիկներ կը բանեցնէր ժէօն Թիւրքերուն դէմ, մանաւորապէս էնթրիկներ ալ կը բանեցնէր ինծի դէմ։ Ուշադրաւ է թէ Բեամիլ, որ Սուլթանին Ծերակոյտին իմ անդամակցութիւնս կ'առաջարկէր, զոր ես մերժեցի տակաւին ոչ-օրինական տարիքս մէջ բերելով, քիչ ետքը թերթերու մէջ գրել կուտար թէ Բեամիլ փաշա ստոյգ նացեր է հրաժարական տալ եթէ ես յաջողէի Ծերակոյտի անդամ ընտրուիլ, որովհետև տարիքս չեմ առած եղեր։ Ասով կ'ուզէր ապացուցանել թէ ստատանդարական տեսութիւնները, և երբ տարիքը ներկայանայ, պաշտ դանել զինքը։ Երդում բրաւ թէ Սահմանադրութեան հաւատարիմ կ'ուզէ մնալ։ Եւ ասոյ խնդրեց ինձմէ Լոնտոնի բարեկամներուս ըսել թէ Ապտիլ Համիտ կը ճանչնայ Անգլիոյ հանդէպ իր մինչեւ հիմա հետեւած քաղաքականութեան սխալները, թէ Անգլիա թո՛ղ ներէ իրեն, որովհետև կը փափաքի այսօրէն սկսեալ ամէն խնդիրներու մէջ բոլորովին Անգլիոյ հետ երթալ, և չաս գոն պիտի ըլլայ եթէ զինակցութիւն մը կնքուի երկու Պետութիւնց միջեւ, որուն արդէն փափաքող է ամբողջ Թուրք ժողովուրդը։

Ի վերջոյ Սուլթանը արտօնեց զիս ուղղակի իրեն հետ թղթակցիլ։ Նոյն իրիկունն իսկ այս խօսքերը հաղորդեցի Կ. Պոլսոյ անգլիական դեսպանին, եւ ըսի թէ անկարելի է որ ես զայն պաշտպանեմ ա՛յն քաղաքին մէջ (Լոնտոն), ուր ա՛ինքան խիստ յարձակումներու ենթարկուած է Ապտիլ Համիտ։ Երեք օր վերջ Կ. Պոլսէն մեկնեցայ։ Մեկնելէս չատ քիչ առաջ խօսակցութեան մը միջոցին Բեամիլ փաշայի հետ, որ զրեթէ երկու ամիս առաջ տապալուած էր նաւատորմին բռնած դիրքին պատճառաւ, ան խօսեցաւ ինծի բանակին անկարգապահութեան վրայ։ Իմ մէկ հարցումիս պատասխանեց թէ կ'ուզէ կրկին ընդունիլ մեծ եպարգոսութիւնը, եթէ դարձեալ առաջարկեն իրեն, բայց պայմանաւ որ Քոմիթէին լուծուի Կ. Պոլսէն բժմնուեցայ։ ա՛յն զգացումով թէ Սահմանադրութեան եւ Անգլիոյ մասին Ապտիլ Համիտի երդումները եւ համակրութիւնները որոշ և ծանրակշիռ պատճառ մը պէտք է ունենային ի հարկէ, և տասը օր վերջ Իզմիրի մէջ իմացայ բէպքիսանին լուրը։ Սուլթանը անգլիական ազդին համար իր բարեկամական հաւատքներով կ'ուզէր նպաստաւոր արամադրութիւն մը ապահովել Անգլիոյ մէջ։

Պոստա-Հերսէքի խնդրոյն մէջ Աստրիոյ հետ համաձայնութեան չնտագով էի միշտ։ Իսմայիլ Բէմալ, ազատական կուսակցութեան պետերէն մին, սիրելի ազդակիր եղ հանձնարարեցաւ դրամական հանգանակութեան մը կուսակից եղ, եւ Բեամիլի անկումէն վերջ հակառակորդ կողմին անցաւ։ Երբ այս մասին հարցուցի իրեն, պատասխանեց թէ Բեամիլի օրով Նովիպազարի մասին ա՛ինպիսի կարգադրութիւն մը կար՝ որով հանձնաժողովութիւնը կրնար հնարաւոր ըլլար։ Գացինք այս մասին տեղեկութիւն ուզելու Հիլմի փաշայէն, որ հերքեց այդ տեսակ կարգադրութեան մը գոյութիւնը։ Իսմայիլ Բէմալ պնդեց դարձեալ, սակայն Երեսի. Ժողովին մէջ կառավարութիւնը այդ մասին չհարցասխնեց պաշտօնապէս։ Իսմայիլի այս բռնած ընթացքը հաղորդեցի Կ. Պոլսոյ գեղեմն դեսպանին։

Թէև հիւսիսային Ալպանիացիները այն ատեն իրենց վատոնութեան արժանացած ժողովուն (Իսմայիլ Բէմալ) դէմ դարձած էին, բայց Քոմիթէին ամէնէն վտանգաւոր հակառակորդներն մին էր անիկա։ Վիեննա գալու համար Սթէնդէն անցած ատենս, տեսայ Իսմայիլ Բէմալը և վերջին դէպքերուն վրայ խօսակցելու միջոցին, բան մը խնացայ անկէց, որ չատ ցաւ պատճառեց ինծի, որովհետև իմ բաղձանքս ա՛յն էր որ սահմանադրական Թուրքիան սահմանադրական Ռուսիոյ հետ բարւոք յարաբերութիւններ ունենայ։ Վերջին տագնապին ժամանակ Իսմայիլ Բէմալ ռուս դեսպան Զինովիէվի այցելելով, խնդրեր է անկէ որ իր պաշտօնակից դեսպաններուն հետ համաձայնի և Ապտիլ Համիտի առաջարկէ յօժար կամքովը հրաժարիլ, և ասով թէ՝ իր կեանքը ազատէ և թէ Պետութիւնը փրկէ ծանր ճգնաժամէ մը։ Զինովիէվ պատասխանեց թէ Ռուսիա չատ բարեացակամ դտնուած է Սուլթանին և Օսմ. Պետութեան, և ոչ մէկէն և ոչ միւսէն քա՛ւ չնորհակալութիւն չէ սեսած։ «Երկուքն ալ արժանի են իրենց ճակատագրին։ Ի՞նչ կ'ուզէք, ասիկա հոգեվարքն է երկուքին ալ»։

Ա՛րդեն ալ Իսմայիլ Բէմալ եւ ազգասիրական կուսակցութեան մարդիկը Ժէօն Թիւրքերուն հետ իրենց կուսակցական կռիւներուն պատճառաւ Մարտ 31ի դէպքերուն մեղսակից եղած են, և ո՛րչափ ալ ես հեռու մնացած եմ ու և է քաղաքական կուսակցութենէ, բայց կ'ուզեմ ազատական կուսակցութիւնը պաշտպանել սա՛ մեղադրանքին դէմ իբր թէ անիկա սահմանադրութեան դէմ դրսծած ըլլայ։ Ազատական կուսակցութիւնը ուրիշ չատ մը քաղաքական կուսակցութեանց սխալները միայն գործեց, բայց այնմ թէ քաղաքական իշխանութեան պաշտօնին մէջ բոլորովին մոգաս իր գաղափարական դաշնակիցները, և ասով, առանց գիտնալու, բէաքսիօնին դատը յառաջացուց կամ քաջալերեց։ Բեամիլ փաշայի անկումէն ի վեր օրէ օր կրցայ կռահել այս գաղափարէաքսիօնին յառաջդիմութիւնները չատ մը փաքրիկ նշաններով։ Իմ կռահածներս Քոմիթէին ալ հաղորդեցի, բայց անիկա այնքան հպարտ էր որ ականջ չկախեց ազդարարութիւններուս կամ թերեւս չհաւատաց։ Քոմիթէին գլխաւոր հակառակորդներէն մին նոյն ինքն Բեամիլ փաշան էր իր անկումէն ի վեր։ Վատահ եմ թէ Բեամիլ, եթէ յաջողէր Փեարֆ.ի իր պետական հարուածին մէջ, Պուլկարիոյ դէմ պատերազմ պիտի հրատարակէր, ուշադրութիւնը շեղեցնելու իր ներքին քաղաքականութենէն, եւ սահմանադրէն վրայ զարգեցնելու համար բանակը, որուն վրայ վստահութիւն չունէր։ Սակայն զինուորական պետերը պուլկարական յարձակումի մը պարագային միայն պատերազմին համամիտ էին։

Ներկայ Սուլթանը ճանչցեր եմ գահաժառանգ եղած ատենէն, և քանիցս առիթ ունեցած եմ անոր հետ խօսելու, և ամէն անգամ համակրութեամբ կը խօսէր հօրս վրայ։ Հայրս ալ լաւ խօսած էր իրեն մասին։ Ճարպիկ եւ պատուաւոր իշխան մը կը համարեր զայն և կը խորհէր ի հարկին Ապտիլ Համիտի տեղը նստեցնել։ Բոլորովին սխալ է թէ ներկայ Սուլթանը քաղաքական կեանքի անտեղեակ է։ Անիկա կը հետեւէր դէպքերուն եւ գիտէ եւրոպական քաղաքականութիւնը եւ անոր վարիչները։ Ներկայ Սուլթանը բնաւ կարծիք չէր յայտներ իր եղբօր մասին, որ այնքան տառապանքներու ենթարկած էր զինքը։ Վեց ամիս առաջ խօսակցութեան մը միջոցին ըսաւ որ, եթէ կառավարութեան գլուխը անցնի իր եղբօր հարստութիւնը իրեն համար պիտի չպահէ, այլ ամբողջ ունեցածը ազգային գանձին պիտի դարձնէ։

Ի վերջոյ կ'ուզեմ ուղղել սխալմունք մը, զոր յաճախ կը կարդամ եւրոպական թերթերուն մէջ։ Անդլիասէր համակրութեան հոսանքներու վրայ կը խօսուի եւ Բեամիլին համար կ'ըսուի թէ անգլիասէր է։ Ես այդ կարծիքէն չեմ։ Սահմանադրական Թուրքիան, ամբողջ հանրային կարծիքը երախտապարտ է Անգլիոյ։ Ամէնն ա՛յս է մայն։ Աւստրիոյ հետ կ'ուզենք խիստ բարեկամական եւ խիստ մերձաւոր յարաբերութիւններ մշակել, եւ կը փափաքինք այդ Տէրութեան հետ համաձայն երթալ ամէն խնդիրներու մէջ։ Հմայարտ արտաքին քաղաքականութիւն մը կը բաղձանք, որ թոյլ տայ մեզի ներքին խնդիրներուն ծառայութեան մէջ դնել մեր բոլոր հետաքրքրութիւնն ու բոլոր ուժերը։

ՊԱՐԿԱՍՏԱՆԻ

ԱԶԳԱՅԱԳՐՈՒԹԵԱՆ ԳԻՒՒԻՆԵՐԸ

ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ՕՐԱԳՐՈՒԹԻՒՆ

ԳԼՈՒԽ 7—19

ԹՈՒՐԻՔ 7, Ապրիլի 1909.

Սրանից 4 օր առաջ, ծրագրած մի ուժգին յարձակումի Շամ-Ղազանի՝ Սամաթ խանի դիրքերի վրայ՝ վիժեց, չնորհիւ սովորական ասիական դանդաղկոտութեան, որ, ի դէպ է ասել, ներկայ ազատագրական կռիւների ընթացքում չատ բացասական դեր է կատարել։ Կէս գիշերին հաւաքած և կազմ ու պարատ է յարձակւող գունդը, բաղկացած մի քանի հարիւր գէշայլներից եւ մի քանի տասնեակ օտարազգի կամաւոր մարտիկներից, երկար սպասելով Թնդանօթների գալուն, որ չատ ուշացաւ, ցրուեց։ Այսօր միայն վաղ առաւօտեան սկսեց այդ յարձակումը՝ Սամաթ խանի կառավարական զօրքերի վրայ։

Ցարձակումը, չնորհիւ որոշ մարդկանց և որոշ շրջանի բացթերտնութեան արդէն յայտնի էր քաղաքում դեռ մի օր առաջ, իսկ քաղաքում տարածուած լուրերը, ըստ ուզածի է, որ խնամքով հասնում են անմիջապէս կառավարչականների բանակները։

Շամ-Ղազանի վրայ կատարած առաջին գրոհին, իր յանդուգն առաջխաղացութեան պատճառով ընկնում է օտարազգի կամաւորներից Ամերիկացի Մր. Գասքվիլ, Թաւրիզի Ամերիկեան դպրոցի նախկին ուսուցիչը, որ անգլիական Տէյլի-Նիւզ թերթի թղթակից Մր. Մօրի հետ մի քանի շաբաթից ի վեր կուռում էին ազատականների շարքերում։

Շամ Ղազանի կռիւը մինչեւ այսօր տեղի ունեցած կռիւներից ամենաուժգինն էր։ Ամբողջ օրը տեւող այդ յարձակումը, մասնակցութեամբ երկուսաեք Թնդանօթների արագ հարուածների, ենթադրում էր դուրս եկել Շամ-Ղազանը, ճանապարհ բացելու դէպի Գարամէլիք աւանը, որ կարող էր մատակարարել սոված քաղաքին առատ պաշար։

Միաժամանակ, քաղաքի հարաւակողմը, Հայոց հանգստարանից վերեւ, հանդիպակաց բլուրների վրայ, Սամաթ խանի կուսակիցներից մի յիսնեակ 2, մեծ և մի փոքր թնդանօթներով, զբաղեցնում էր Սամաթ խանի աջ թեւը, կորելով միաժամանակ ճանապարհը, Էյնի-Տօվլէի բանակից օգնական զօրքերին արգիլելու Շամ-Ղազան մտնելը։

8 Ապրիլի

Երէկուայ յարձակումը, որ այսօր շարունակելու էր, չը կրնաց. պատճառը, հաւանականօրէն, երէկ երեկոյեան կայծակի արագութեամբ քաղաքում տարածուած այն լուրն էր, թէ Շոհը հեռագրով առաջարկում է ժողովրդին հաշտութիւն, որ կայացնելու համար կարգադրել է անել 6 օրուայ զինադադար, բացել այդ օրերի ընթացքում ճանապարհները՝ քաղաքում մթերք ներմուծելու համար։ Այդ նպատակով Վասպիսճ, Էյնը—Տօվլէի բանակը գնացել էին մի մի ներկայացուցիչ անգլիական և ռուսական հիւպատոսութիւններից, սակայն, ինչպէս յետոյ պարզուեց, նոքա գնացել էին միայն իրանց հպատակների մասին հոգալու, նրանց համար ցորեն բերելու.... որ սակայն Էյնը Տօվլէի օգնականի կամակորութեան պատճառով, որ չի ենթարկուել իր պետի կարգադրութեան, անցնում է ձեռնունայն։

Այսօր մեծ շքով, բազմամարդ յուղարկաւորների ներկայութեամբ հողին յանձնուեց երէկուայ կռւում ընկած Մ. Գասքվիլի դիակը, դիակը գուցէ առաջին մարդասիրի, դժբաղդ արեւելքում, որ «մերին տիրոջ խօսքը»— ազատութիւն, հաւասարութիւն, եղբայրութիւն, փոխանակ ժողովրդների ամուլ բեմից քարոզելու, քարոզից զէնքը ձեռին, արեան, փրկութեան իսկական ճանապարհին, իր զոյգուն կրծքը դնողների ճարձրած։ Ցարդ՝նք նրա յիշատակին։

10 Ապրիլի

Երեկոյեան կողմը Շահից ստացած հեռագիրը էյնը—Տօվլէի անունով, կարդացում է բաց թողնել ճանապարհները, վերացնել քաղաքի խիստ պաշարումը և թոյլ տալ, քաղաք ներմուծելու մթերքներ։

Միաժամանակ, անգլիական հիւպատոսարանում ստացած հաղորդութեան համաձայն Շահը ցանկանում է հաշտուել մարտնչող և յաղթական ժողովրդի հետ, տալիս է պահանջած Սահմանադրութիւնը, ընդհանուր ամնիստիա՝ Եւրոպական կոնսոլոյով։

15 Ապրիլի

Ապրիլ 13ից սկսեալ քաղաքի խիստ պաշարումը թեթեւացրած է. ճանապարհները հարաւից, Սամաթ խանի և արեւելքից Էյնը Տօվլէի կողմից յայտարարած է բաց։ Տենդային արագութեամբ քաղաք է ներմուծուում ցորենի առատ պաշար և կենսական այլ մթերքներ, որոնց արժէքները զգալի արագութեամբ սկսում է իջնել իր երկապատիկ, եռապատիկ պակաս արժէքին։ Ժողովուրդ դոն է և ուրախ, նիւթական առօրեայ հոգերով, ստամոքսի հաշիւներով զբաղւող և իրերի խորքը, էութիւնը թափանցելու անընդունակ մասսան հրձւում է, կարծելով, նիւթական, մտաւորական պահանջները բաւարարելու և աւելի բարձր, հոգեկան, կենսական պահանջները բաւարարած։ Ի՞նչ զանազանութիւն այս կեանքը բուսական կեանքի դիտելով։

ՄԱՆԶՈՒՄԷԻ ԹԵՐԹՕՆԸ

)(19)(

ԱՊՏԻԼ-ՀԱՄԻՏԻ ՆԵՐՔԻՆ ԿԵԱՆՔԸ

Գրեց՝ Ժ. ՏՕՐԻՍ — Թրգմ. ՍՄ. ԲԻՒՐԱՏ

Ապտիլ Համիտ իր յարկաբաժինները մէջ հաստատած է հեռաձայնն ու եւլեկտրական լուսաւորումը, բայց նոյնը չէ թոյլատրած Պոլսոյ մէջ, օրքան ալ անհրաժեշտ ըլլան անոնք մեծ մայրաքաղաքի մը. խորհեր է թէ՝ դուսկցութիւնները մեծապէս պիտի դիւրացնէ ինքնակալութիւնը —ամէն հսկողութիւն արհամարհող այս հնամարիտ ու անտեսանելի քանները—։ Ժամանակին նախարարները քաջալերած են իրենց տիրոջ այս ապուշ կարծիքը, եւ մինչեւ իսկ համոզած են զինքը թէ ուժանակի մէկ փամփուշտը կրնար հեռուէն զինք սպանել, եթէ հաղորդիչ թելին ծայրը դրուէր...։ Պէտք է ըսել թէ այդ վսեմաշուքները մեծ չահ ունէին արգիլելու՝ զիրենք ամէն վայրկեան պալատ կանչելու այդ միջոցը, եւ զիրենք չարունակ իր ձեռքին տակ ունենալու, բան մը որ իրենց համար ոսոխի տանջանք մը էր իրենց Վեհապետը խենդեցնող այն քաղաքական տագնապներուն ատեն։

Եւլեքտրական լուսաւորումն ալ նոյն սոսկումը կ'ազդէ իրեն, եւ եթէ զայն իր յարկաբաժիններուն մէջ կը գործածէ իրեն համար, յամառօրէն կը հակառակի անոր հասատատելուն թէ՝ Պոլսոյ եւ թէ Պալատին միւս մասերուն մէջ։ Մենաշնորհներու խնդրանքներ անգթօրէն մերժուած են, հակառակ Նորին Վեհափառութեան խոստացուած դրամական օգուտներուն եւ հակառակ առատ առատ պահանջներուն, որոնք իր խորհրդականներուն կը բաշխէին դժբաղդ խնդրարկուներուն կողմէն։

Այսօր Կ. Պոլսոյ է միակ մայրաքաղաքը, որ դեռ կազով միայն կը լուսաւորուի եւ իր բնակիչները դատապարտուած են կէս-մութի մը, որքան որ ապրի այդ Սուլթանը(*)։

Բէքա-Բալէյսի ու Սրմմրը-Բալէյսի հիւանդոցները, Օսմանեան Դրամատան եւ Հանրային Պարտուց շէնքերը, ինչպէս նաեւ Մօտալի մէջ յոյն մարբահէր Պ. Ստեֆանովիչի բնակարանը, միակ շէնքերն են եւլեկտրականութեամբ լուսաւորուած, տիւնամիթներն ու հորկաւոր ազդակները՝ մաքսային արդելքի տակ դրուելուն շնորհիւ։

Այս յամառութեան պատճառը կը բացատրուի այն պարագայով որ Ապտիլ Համիտ ճանչցած է եւլեկտրական պայթումներու վտանգը, որոնք կրնան ծագիլ հաղորդիչ պարաններուն համախառնումէն առաջ եկած հոսանքներուն սաստիկ ձգտումէն...։

Եւ քաղաքին մնասող ամէն պայթում կրնար օգը հանել երկրագը...։

Ա՛յն ատենն կը վախնայ այս տեսակ աղէտք է մը, որ տինամօ պարզ բառը զինք կը քստմնեցնէ իր զուտ ատազգական խնամախութեամբ տինամիթի անունին հետ, որուն դէմ խորունկ ատելութիւն մը կը մնուցանէ։

Թեղանօթարանի գործադիրներուն մէջ Ալի պէյ անունով տաղանդաւոր ս.պայ մը կայ, որ դժբաղդաբար, Դիրմանիոյ մէջ պայթուցիկներ շինելու մասնագիտութիւնը սորված ըլլալուն պատճառաւ, իր ընկերներէն տինամիթնի մակդիրը ստացած է։ Այս սպան ամենափոքր առաջացում մը չէ կրցեր երբէք ձեռք բերել, որովհետև այդ չարաչուք մակդիրը կը կրէ։

Սուլթանը, որ առաւելի կերպով կը վախնայ կայծակէն, չի վստահիր սա՝ այն չանթարգելին, կարծելով թէ՝ ա՛ս իրեն կը քաջէ զայն եւ վախնալով որ, եւլեկտրական կայծը, փոխանակ հլութեամբ մինչեւ գետինը հետեւելու հաղորդիչ շղթային, չի խոտորի ճամբէն եւ չի գայ զինքը զանէ։

Զօրավար Ապտիլ բաշա, որ Եղիզեղի Ժամացոյցներու Աշտարակին վրայ վտանգաւոր ամսամանդրական Ռուսիոյ հետ բարւոք յարաբերութիւններ մշակէ միշտ։ Վերջին տագնապին ժամանակ Իսմայիլ Բէմալ ռուս դեսպան Զինովիէվի այցելելով, խնդրեր է անկէ որ իր պաշտօնակից դեսպաններուն հետ համաձայնի և Ապտիլ Համիտի առաջարկէ յօժար կամքովը հրաժարիլ, և ասով թէ՝ իր կեանքը ազատէ և թէ Պետութիւնը փրկէ ծանր ճգնաժամէ մը։ Զինովիէվ պատասխանեց թէ Ռուսիա չատ բարեացակամ դտնուած է Սուլթանին և Օսմ. Պետութեան, և ոչ մէկէն և ոչ միւսէն քա՛ւ չնորհակալութիւն չէ սեսած։ «Երկուքն ալ արժանի են իրենց ճակատագրին։ Ի՞նչ կ'ուզէք, ասիկա հոգեվարքն է երկուքին ալ»։

Ա՛րդեն ալ Իսմայիլ Բէմալ եւ ազգասիրական կուսակցութեան մարդիկը Ժէօն Թիւրքերուն հետ իրենց կուսակցական կռիւներուն պատճառաւ Մարտ 31ի դէպքերուն մեղսակից եղած են, և ո՛րչափ ալ ես հեռու մնացած եմ ու և է քաղաքական կուսակցութենէ, բայց կ'ուզեմ ազատական կուսակցութիւնը պաշտպանել սա՛ մեղադրանքին դէմ իբր թէ անիկա սահմանադրութեան դէմ դրսծած ըլլայ։ Ազատական կուսակցութիւնը ուրիշ չատ մը քաղաքական կուսակցութեանց սխալները միայն գործեց, բաց այնմ թէ քաղաքական իշխանութեան պաշտօնին մէջ բոլորովին մոգաս իր գաղափարական դաշնակիցները, և ասով, առանց գիտնալու, բէաքսիօնին դատը յառաջացուց կամ քաջալերեց։ Բեամիլ փաշայի անկումէն ի վեր օրէ օր կրցայ կռահել այս գաղափարէաքսիօնին յառաջդիմութիւնները չատ մը փաքրիկ նշաններով։ Իմ կռահածներս Քոմիթէին ալ հաղորդեցի, բայց անիկա այնքան հպարտ էր որ ականջ չկախեց ազդարարութիւններուս կամ թերեւս չհաւատաց։ Քոմիթէին գլխաւոր հակառակորդներէն մին նոյն ինքն Բեամիլ փաշան էր իր անկումէն ի վեր։ Վստահ եմ թէ Բեամիլ, եթէ յաջողէր Փեարֆ.ի իր պետական հարուածին մէջ, Պուլկարիոյ դէմ պատերազմ պիտի հրատարակէր, ուշադրութիւնը շեղեցնելու իր ներքին քաղաքականութենէն, եւ սահմանադրէն վրայ զարգեցնելու համար բանակը, որուն վրայ վստահութիւն չունէր։ Սակայն զինուորական պետերը պուլկարական յարձակումի մը պարագային միայն պատերազմին համամիտ էին։

Ներկայ Սուլթանը ճանչցեր եմ գահաժառանգ եղած ատենէն, և քանիցս առիթ ունեցած եմ անոր հետ խօսելու, և ամէն անգամ համակրութեամբ կը խօսէր հօրս վրայ։ Հայրս ալ լաւ խօսած էր իրեն մասին։ Ճարպիկ եւ պատուաւոր իշխան մը կը համարեր զայն և կը խորհէր ի հարկին Ապտիլ Համիտի տեղը նստեցնել։ Բոլորովին սխալ է թէ ներկայ Սուլթանը քաղաքական կեանքի անտեղեակ է։ Անիկա կը հետեւէր դէպքերուն եւ գիտէ եւրոպական քաղաքականութիւնը եւ անոր վարիչները։ Ներկայ Սուլթանը բնաւ կարծիք չէր յայտներ իր եղբօր մասին, որ այնքան տառապանքներու ենթարկած էր զինքը։ Վեց ամիս առաջ խօսակցութեան մը միջոցին ըսաւ որ, եթէ կառավարութեան գլուխը անցնի իր եղբօր հարստութիւնը իրեն համար պիտի չպահէ, այլ ամբողջ ունեցածը ազգային գանձին պիտի դարձնէ։

Ի վերջոյ կ'ուզեմ ուղղել սխալմունք մը, զոր յաճախ կը կարդամ եւրոպական թերթերուն մէջ։ Անդլիասէր համակրութեան հոսանքներու վրայ կը խօսուի եւ Բեամիլին համար կ'ըսուի թէ անդլիասէր է։ Ես այդ կարծիքէն չեմ։ Սահմանադրական Թուրքիան, ամբողջ հանրային կարծիքը երախտապարտ է Անգլիոյ։ Ամէնն ա՛յս է մայն։ Աւստրիոյ հետ կ'ուզենք խիստ բարեկամական եւ խիստ մերձաւոր յարաբերութիւններ մշակել, եւ կը փափաքինք այդ Տէրութեան հետ համաձայն երթալ ամէն խնդիրներու մէջ։ Հմայարտ արտաքին քաղաքականութիւն մը կը բաղձանք, որ թոյլ տայ մեզի ներքին խնդիրներուն ծառայութեան մէջ դնել մեր բոլոր հետաքրքրութիւնն ու բոլոր ուժերը։

ՊԱՐԿԱՍՏԱՆԻ

ԱԶԳԱՅԱԳՐՈՒԹԵԱՆ ԳԻՒՒԻՆԵՐԸ

ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ՕՐԱԳՐՈՒԹԻՒՆ

ԳԼՈՒԽ 7—19

ԹՈՒՐԻՔ 7, Ապրիլի 1909.

Սրանից 4 օր առաջ, ծրագրած մի ուժգին յարձակումի Շամ-Ղազանի՝ Սամաթ խանի դիրքերի վրայ՝ վիժեց, չնորհիւ սովորական ասիական դանդաղկոտութեան, որ, ի դէպ է ասել, ներկայ ազատագրական կռիւների ընթացքում չատ բացասական դեր է կատարել։ Կէս գիշերին հաւաքած և կազմ ու պարատ է յարձակւող գունդը, բաղկացած մի քանի հարիւր գէշայլներից եւ մի քանի տասնեակ օտարազգի կամաւոր մարտիկներից, երկար սպասելով Թնդանօթների գալուն, որ չատ ուշացաւ, ցրուեց։ Այսօր միայն վաղ առաւօտեան սկսեց այդ յարձակումը՝ Սամաթ խանի կառավարական զօրքերի վրայ։

Ցարձակումը, չնորհիւ որոշ մարդկանց և որոշ շրջանի բացթերտնութեան արդէն յայտնի էր քաղաքում դեռ մի օր առաջ, իսկ քաղաքում տարածուած լուրերը, ըստ ուզածի է, որ խնամքով հասնում են անմիջապէս կառավարչականների բանակները։

Շամ-Ղազանի վրայ կատարած առաջին գրոհին, իր յանդուգն առաջխաղացութեան պատճառով ընկնում է օտարազգի կամաւորներից Ամերիկացի Մր. Գասքվիլ, Թաւրիզի Ամերիկեան դպրոցի նախկին ուսուցիչը, որ անգլիական Տէյլի-Նիւզ թերթի թղթակից Մր. Մօրի հետ մի քանի շաբաթից ի վեր կուռում էին ազատականների շարքերում։

Շամ Ղազանի կռիւը մինչեւ այսօր տեղի ունեցած կռիւներից ամենաուժգինն էր։ Ամբողջ օրը տեւող այդ յարձակումը, մասնակցութեամբ երկուսաեք Թնդանօթների արագ հարուածների, ենթադրում էր դուրս եկել Շամ-Ղազանը, ճանապարհ բացելու դէպի Գարամէլիք աւանը, որ կարող էր մատակարարել սոված քաղաքին առատ պաշար։

Միաժամանակ, քաղաքի հարաւակողմը, Հայոց հանգստարանից վերեւ, հանդիպակաց բլուրների վրայ, Սամաթ խանի կուսակիցներից մի յիսնեակ 2, մեծ և մի փոքր թնդանօթներով, զբաղեցնում էր Սամաթ խանի աջ թեւը, կորելով միաժամանակ ճանապարհը, Էյնի-Տօվլէի բանակից օգնական զօրքերին արգիլելու Շամ-Ղազան մտնելը։

8 Ապրիլի

Երէկուայ յարձակումը, որ այսօր շարունակելու էր, չը կրնաց. պատճառը, հաւանականօրէն, երէկ երեկոյեան կայծակի արագութեամբ քաղաքում տարածուած այն լուրն էր, թէ Շոհը հեռագրով առաջարկում է ժողովրդին հաշտութիւն, որ կայացնելու համար կարգադրել է անել 6 օրուայ զինադադար, բացել այդ օրերի ընթացքում ճանապարհները՝ քաղաքում մթերք ներմուծելու համար։ Այդ նպատակով Վասպիսճ, Էյնը—Տօվլէի բանակը գնացել էին մի մի ներկայացուցիչ անգլիական և ռուսական հիւպատոսութիւններից, սակայն, ինչպէս յետոյ պարզուեց, նոքա գնացել էին միայն իրանց հպատակների մասին հոգալու, նրանց համար ցորեն բերելու.... որ սակայն Էյնը Տօվլէի օգնականի կամակորութեան պատճառով, որ չի ենթարկուել իր պետի կարգադրութեան, անցնում է ձեռնունայն։

Այսօր մեծ շքով, բազմամարդ յուղարկաւորների ներկայութեամբ հողին յանձնուեց երէկուայ կռւում ընկած Մ. Գասքվիլի դիակը, դիակը գուցէ առաջին մարդասիրի, դժբաղդ արեւելքում, որ «մերին տիրոջ խօսքը»— ազատութիւն, հաւասարութիւն, եղբայրութիւն, փոխանակ ժողովրդների ամուլ բեմից քարոզելու, քարոզից զէնքը ձեռին, արեան, փրկութեան իսկական ճանապարհին, իր զոյգուն կրծքը դնողների ճարձրած։ Ցարդ՝նք նրա յիշատակին։

10 Ապրիլի

Երեկոյեան կողմը Շահից ստացած հեռագիրը էյնը—Տօվլէի անունով, կարդացում է բաց թողնել ճանապարհները, վերացնել քաղաքի խիստ պաշարումը և թոյլ տալ, քաղաք ներմուծելու մթերքներ։

Միաժամանակ, անգլիական հիւպատոսար

քից։ Սակայն Իւրմանութեան տեղն չը տալու համար չտապեմ յայտնելու, որ իմ խօսքը, անշուշտ, Պարսկի ժողովրդի գիտակից, հասկացող տարրի մասին չէ, որը հանդիսացել է և հանդիսանալու է կրողը իր երկրի իսկական ազատագրական չարժումներ՝ ծանր զոհաբերութիւնների գնով։

Անհրաժեշտ է նոյնպէս նկատել, որ մթերքների այս ներմուծումը չէր կարող անշուշտ այդպէս արագօրէն ազդել նրա տրժէքների այդպիսի անկման եւ աճման վրայ մի—երկու օրում, եթէ իրօք քաղաքը դարձած լինէր այնպէս սոսմամ, ինչպիսին ներկայանում էր ըստ երեւոյթին, իմ ակնարկը, նախորդ նամակներից մէկում, թէ տիրող սովը արեւստանկան է և ստոր չահադիտութեան արդիւնք։ գալիս է ներկայ փաստերով ճշդելու։

17 Ապրիլի

Իռուսական զօրք Թաւրիզում։—Հեռագիրները հաղորդած կը լինին անշուշտ, որ այսօր, երեկոյեան ռուսական մի բրիգադա, վեց արտիլիրայով հասաւ Թաւրիզ, Զուլֆայի վրայով, անցնելով Զուլֆայից այսպէս 4 օրում։ Չորքը ճանապարհած է ապրիլ 14ին Թիֆլիսից, գեներալ Անարսկու հրամանատարութեամբ, որ Բիրսուարի (*) հերոսն է։ Այժմ բոլորովին պարզ է, թէ ինչ էր նշանակում մի քանի օր առաջ ստացած տեղեկութիւնը, թէ տրւելիք սահմանադրութեան մը տեսակ ներկայացուցչական կառավարութեան վրայ Պարսկաստանում հսկելու է ուրոպական կօնտրոլը։

Թաւրիզի չարժումների տեւողութեան ամբողջ ընթացքում, այստեղ, որոշ չը ջնններում եղել են մարդիկ, որոնք չանք չէն խնայել առաջ բերելու Պարսկաստանի ներքին գործերում արտաքին միջամտութիւն, ռուսական ռուսական։ Թէչրանի Ռուսական դեսպան Հարուտիւնի քաղաքականութիւնը, մանաւանդ նրա վերջին, եռանդուն չանքերը Պետերբուրգում, չառաջացնելու այդ միջամտութիւնը՝ ձեզ յայտնի է։ Սակայն Պետերբուրգի վարիչները մինչեւ այժմ թում էին տուել խելօք քան Հարուտիւնն ու իր հետեւորները։ որովհետեւ Ռուսաստանի միջամտութիւնը Պարսկաստանի գործերում, մանաւանդ քաղաքական մի չատ փափուկ մոմենտում — երբ տաճկական բանակը կռզմ ու պատրաստ կանգնած էր թիրքօ—պարսկի սահմանի վրայ և ապա Բալկանեան տագնապը, որով այնքան չանգրգռուած էր Ռուսաստանը — կը լինէր մը ավելորդաբար տանդերա, որպիսին ունեցել էր նա դեռ հազիւ մի քանի տարի առաջ և որի կրած հարուածից դեռ նա չէր սթափուած։ Սակայն ներկայումս, երբ երիտասարդ տաճկաստանը զբաղած է իր ներքին հոգսերով, բռնակալութեան վերջին մնացորդները մաքրելու։ ունի կարեւոր աշխատանքներով, մաս կողմից Բալկանեան կրիզիսը համարեւում է մեղմացած և նրա երկնակամարը ծածկող մռայլ ամպերը տակաւ նօսրանում, անհետանում է, Ռուսաստանի Նախնիսուած, զբաղուած քաղաքականութիւնը (**), իր բուժումը որոնում է թիշուառ և սիրաչտան Պարսկաստանում։

Չարի կառավարութեան այս քայլի արդացման ոչ պակաս նպաստած կը լինի, անշուշտ, Շահ Ղազիի յարձակումից մի օր առաջ տեղիս ռուսական հիւպատոս Մելիլէրի եւ ռուսակ. պաշտօնական եւ առեւտրական հաստատութիւնների ուղղած հեռագիրները Պետերբուրգ սենսացիօն բովանդակութեամբ, ներկայացնելով քաղաքի դրութիւնը սարսափելի և օտարազգիների կեանքն ու կայքը վտանգի ենթակայ։ Հրէշաւոր չափազանցութեան հասած այդ լուրերը քաղաքի դրութեան մասին, ինչպէս երեւում է, ազդել են նոյն իսկ սահմանը անցնող բանակի վրայ, որ մինչեւ Թաւրիզ հասել է այն հաւանականութեամբ, որ ամէն րոպէ ենթակայ են լինելու կամ կառավարական եւ կամ ազատական կողմերի յարձակմանն ու դիմադրութեանը, որ տեղի չունեցաւ սակայն, բացի մի անընչան միջադէպերից։

Արտաքին այս գործօն միջամտութիւն առաջ բերող պատճառներից և այն հիմնական պատճառներից մէկին էլ անշուշտ Շահի խելագար յամառութիւն է, անշուշտ, ժողովրդական արդարացի պահանջի հանդէպ, որի համար ամբողջ մի տարիէ նա արիւն է թափում։ Ինչպէս և կամակոր դիմադրութիւն այն նօթաներին, որ մի քանի անգամներ ներկայացրել են Շահին Անգլիան և Ռուսաստանը — պահանջելով դրանից մոցնել երկրում ներկայացուցչական կառավարութիւն։ վերացնել տիրող անիշխանութիւնը և կարգը վերահաստատել— որոնք գործում են անշուշտ և այս դէպքում հանմերչս և եթէ ճիշդ է այն տեղեկութիւնը, որ միաժամանակ և անգլիական զօրքերը, Պարսկաստանի հարաւից, Բէնդէր—Բուշիրի կողմից ներս են մտել Պարսկաստանը՝ իրենց ազդեցութեան չրջանում գտնուող վայրերը, այն ժամանակ չատ պարզ է, որ Էտուարտի կառավարութիւնը արտօնութիւն է տուել ռուսական այս աշխարհակալական ձեռնարկին՝ ըզբաղելու համար վերածնութեան երկունքում գալարուող այս երկիրը։ Եկող ռուսները յայտարարում են, որ եկել են միայն հիւպատոսարանի և իրանց հպատակների կեանքն ու չաները պաշտպանելու համար որ նրանք երկրի ներքին գործերին և նրանց կռիւներին չեն միջամտելու, սակայն երեւոյթները ցոյց են տալիս, որ նոցա պաշտօնը երկրում կարգ վերականգնելն է, և նրանց ներկայութիւնը այժ է տալու այն առաջադրութիւններին, որ արել և անելու են չարագրգռող պետութիւնները։ իսկ այս բոլորից յետոյ նոքա Ատրպատականը, Իրանի թագաւորական թագի այդ չքնաղ «գոհարը»— ինչպէս սիրում է անուանել, իր երկրի, հայրենիքի չաներին դաւաճան միապետը—վերադեալու են մի նոր Մանչուրիայի, թէ իրենց պաշտօնը կատարելուց յետոյ տեռանալու են իրենց չը պատկանող երկրին սահմանները, դժուար է ասել, սակայն եւ այնպէս առաջինը թւում է հաւանական։

19 Ապրիլի

Մօտ երկու ամսւայ ընդհարումից յետոյ պօսար, երկ, առաջին անգամ ճանապարհից դէպի Ռուսաստան, որից սակայն դեռ չի ստացուել։ Բարիմ խանի գրաւած վերջին մի ամսւայ պօսարը, ասում են, որ նրա ձեռքով ոչնչացած է։ Հ. Պ.

(*) Ճիշդ մի տարի առաջ էր, երբ Բիրսուարում, Արաքսիլի մօտերը, ռուսական ասոմանի վրայ Շահսէվան կոչած պարսկի անկանոն զօրքը կրակելով ռուս կազակների վրայ սպանել էին մի քանի սին և մի քանիսին էլ վիրաւորել։ Այդ ինցիդենտի պատճառով ռուս կառավարութեան կարգադրութեամբ զօր. Անարսկին անցաւ Բիրսուարի կողմից Պարսկական սահմանը, մինչեւ որ Շահի կառավարութիւնը նրանական բաւարարութիւն տուց և այդպիսով ինցիտենտը հաշուեց փակւած։

(**) Ճիշդ է, նա կարող է իրան մը խիթարել նրանով, որ վճարելով Բուլղարիայի պարքը Տաճկաստանին, նրանից ունեցած իր պահանջի հաշիւն՝ զրանով ձեռք էր բերել փոքրիկ Բուլգարիայի վրայ ֆինանսական այդ ազդեցութիւնը. սակայն դա բաւական չէր մոռանալու Հերցեգ—Բոսնիայի, Աւստրիայի կողմից գրաւման խնդրում, ինչպէս լիշեցի, իր արտաքին քաղաքականութեան կրած պարտութիւնը, որի վրայ դառնապէս չնչում էին Ռուսական թերթերը, համարելով նրան մինչեւ իսկ խոնարհուած երկրորդական պետութիւնների չարք որքանից յետոյ. այնպէս որ, նրան հարկաւոր էր սերբիտորիալ հոտուցում, որի հաշիւ իր սխորժակները ուղղուեցին դէպի հարաւ՝ դեպի Պարսկաստան։

(*) Կիներու և աղջիկներու մասիրուն վրայ քարիւղ թափելով այրեր են, զոհերուն տառապանքին առջև վայրագ ծափահարութիւններ և խրախճանութիւններ ոարքելով...

ՏԱՐՍՈՆԻ ՉԱՐԻԼ

ԹԷՕՆ ԹԻՒՐԻՔ ԱԶՆԻՒ ՀԱՅԱՐԱՊԵՏԻ ՄԸ ՍԻՏԱՊՆԵՒԻՔ ՑԱՏԵԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ

(ԱԿԱՆԱՏԵՍԻ ՄԸ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ)

Չարդի եւ հրդեհի արհաւիրքէն դեռ հազիւ կրցած ենք սթափիլ։ Հիմա թիշուառութիւնն է որ իր նախձիրները կը գործէ։ Անդորրաւէտ բնակարաններու կեանքը վայելելէ վերջ մոխրակոյտերու վրայ նստելու դատապարտուած հազարաւոր ընտանիքներու վիճակը անտանելի եւ արգահատելի է միանգամայն։ Հոս համառօտակի արձանագրել կը փորձեմ կոտորածին մանրամասնութիւնները։

Ապրիլ 1, Զորեքշաբթի անսովոր փոդանարութիւն մը սկսաւ։ անմիջապէս գօլէնին ,ատչամը վազեցինք իրականութիւնը հասկնալու համար։ Խուժանային ամբոխ մը դէպի զինուորական պահակնոց կ'ճանապարհ անօրինակ իրարանցումը մը մատնուած։ Երբ մի քանի թուրք ծանօթներէ հարցուցինք այս խուճապին պատճառը, մեզ ըսին թէ Ատանայի մէջ խովութիւն մը ծագած է եւ զինուորական ուժի պէտք տեսնուած, ասոնք զինուորներ են և՝ հոն պիտի երթան։ Այդ օր բաւական մարթիին բաշխուեցաւ թուրք խուժանին եւ Ատանա դրկուեցաւ։ Հետեւեալ օրը, Հինգշաբթի, երբ Ատանայի կառախումբը Տարսոն հասաւ, մի քանի թուրք հօմաներ կայարանը սպասող թուրք ամբոխին երեսին կը պոռան։ «Դեռ ի՞նչ կը սպասէք, Ատանա թուրք չթողուցին, մահվ ըրին»։ Իսլամ մոլեռանդութիւնը անգամ մըն ալ կը մոլեգնի, խուժանը նորէն կը յարձակի պահակոցին վրայ, մնացած բոլոր զէնքերը կը բաշխուին, սուրերը շողալ կը սկսին, դաղանային նպատակներ առելութեան մոլուցքովը կը փոթորկին, և մենք գօլէճէն կը դիտենք այս ամէնը, (պահակոցը մեր վարժարանէն հազիւ 50 մէթր հեռաւորութիւն ունի)։ Զենք գիտեր ի՞նչպէս եղաւ, այդ օրը Չարդը յետաձգուեցաւ, չուկան հայ մնացած չէր, ամենքն ալ իրենց տունները փակած էին։ կեսարացի հայ երիտասարդ մը չարաչար սպանուեցաւ պանդոկի մը առջև ուր դեռ ժամ մը առաջ իլեւնած էր։

Ուրբաթը լուսցաւ, վայրկեանէ վայրկեան կոտորածին նոխազգացումը կը ճնշէր մեր սիրտը։ Խուժանին կատաղի պոռտուքները ծայր տուին հեռուէն, մաղէրները անհամաչափ որոտումներով գոռալ սկսան։ Հայոց թաղերը երեք կողմերէ յարձակում կրեցին. ընդհանպատրաստութեան որ եւ է փորձ չեղաւ որովհետեւ անկարելի էր։ Դիրաչակիր փաթթոցաւորներ կ'առաջնորդէին խուժանը եւ զանոնք կը խրախուսէին «փառիչաւ հմմ չոգ եաչա» պօռալով։ Մ'ինչդեռ աւարառութիւնը եւ կոտորածը կը շարունակէր, հրդեհն ալ սկսաւ իր դժոխային գործունէութեան. մի քանի ժամէն այնչափ ծաւալեցաւ որ ամբողջ մթնոլորտը ծուխով լեցուցաւ եւ մենք դժուարաւ կը շնչենք այդ թունաւոր եւ թանձրամուխ օդը։ Հայերը այս անակնկալ յարձակումէն ապրելի տանիքէ տանիք փախչելով դէպի օտար հաստատութիւններ ազատուեցին։ երկու ժամէն երեք հազարէ աւելի Հայեր գօլէճին զանազան յարկաբաժիններուն մէջ խճողուեցան։ Անկարելի է նկարագրել սարսափի, վայնասունի, իրարանցումի այն ողբերգութիւնը որ տեղի կ'ունենար։ Թէև գօլէճը պաշտպանելու համար մի քանի զինուորներ զրկուած էին, մենք չէինք կրնար երբեք վստահ ըլլալ անոնց անկեղծութեան որոնք բացայայտ կերպով դժգոհ էին Թալատի եւ Ջարդի հեռագրէն զբաղուած ըլլալնուն համար։

Ատանայէն հոս եկած զինուոր մը տեղւոյս հոլանտական հիւպատոսին ընակարանին առջեւ երթալով կը պոռար, «Ատանայի մէջ Հայերը ընջինջ ըրինք, հոս ալ այնպէս պիտի ընենք. Հայերը մի՛ ընդունիք ձեր տուներուն մէջ, ապա թէ ոչ դո՛ւք ալ կը ջարդուիք»։ Այս խօսքերը դպրոցականներէն չատերը լսեցին (հիւպատոսարանը դպրոցին ճիշտ դիմացն է)։ Հիւպատոսը, յոյն մը, կը հրամայէ մէկիկ մէկիկ դուրս հանել Հայերը, մի քանի անձնական բարեկամները միայն թողլով։

Չարդը և թալանը առուուլնէ մինչև իրիկուն անընդհատ չարունակուեցաւ, իսկ հրդեհը ամբողջ երկու օր տեւեց և փճացուց հայոց թաղերը, 700 տուն։ Ուրբաթ գիշեր հրդեհին ճարճատող բոցավառութիւնը առեալ տեսարան մը կը պարզէր, լոյսը այնչափ զօրաւոր էր որ մինչև իսկ գիրք կարդալ կարելի էր։

Շաբաթ առաւօտ հինգ հարիւրէ աւելի արկածեալներու թափօր մը զինուորներու պաշտպանութեամբ գոլէճ եկան։ Ամենքն ալ մահաթիւ ուրուականներ էին կարծես ցեխոտ և պատառատուն զգեստներով, չատերն ալ բոպիկ։ Ատանի իրենց կեանքը ազատելու համար Կիւրնոսի եզերքը մօրացած եղեգնուտներուն մէջ ապաստանած էին և ամբողջ գիշերը ցեխերուն մէջ տապալած, անթի և անպատսպար։

Շաբաթ կէսօր վարժարանիս անօրէն Մր. Բրիսթի և ուսուցիչներէն Մր. Կիպսոս, որոնք Ատանա կը գտնուէին մի քանի օրերէ ի վեր, հոս եկան իրենց հետ բերելով 30ի չափ կանանաւոր զօրքեր։ Ասոնց գալուստը մեծ ուրախութիւն պատճառեց, որովհետեւ կը վախցուէր որ Թուրք խուժանը գոլէճին վրայ ալ յարձակի և կոտորէ տոն ապաստանած հայութիւնը։

Տարսոնի չրջականներուն մէջ միակ հայ գիւղ մը կը գտնուէր չրջապատուած բազմաթիւ Թուրք գիւղերով։ Այդ գիւղը Գոզլուրգ) քսանեակի խուժդուժութիւններու ենթարկուած է, բնակիչներուն մեծ մասը անիրայ չարդուած, գեղեցիկ կիներն ու աղջիկները առեւանգուած, լըլկուած կամ Թուրք երիտասարդներու հետ բռնի ամուսնութեան ստիպուած են։ Շատերն ալ թրքացնելէ վերջ անմիջապէս սպանուած են որպէս զի գէթ անոնց հոգիները փրկեն...(*)

Գործադրուած խուժդուժութիւններու մասին գաղափար մը տալու համար բաւական է միայն յիշել հետեւեալ անելի իրականութիւնը։ Գաղաքէն մէկ ժամ հեռաւորութեամբ այգիի մը մէջ կը գտնուէր 70 տարեկան Հայ կին մը, ամուսնոր և դալկադէմ պառաւ մը, 10ի չափ Թուրքեր կը բռնեն զայն և զատ զատ կը լլկեն... եթէ օթուած պառաւի մը հետ այսպէս վարուին, երեւակայեցէ՛ք թէ գեղանի աղջիկներուն և հարսերուն ինչեր ըրին։ Լսեցէ՛ք որ 40 թէլլաներ Ատանացի աղջիկ մը գաղանաբար բռնաբարելէ վերջ կիսամեռ և անգգայ վիճակի մէջ Հայերուն վերադարձուցեր են։ Բռնի թրքացած Հայերու թիւը հարիւրներու կը հասնի։ Ագարակները և գիւղերը գտնուող բազմաթիւ Հայերէն հազիւ մի քանի հոգի ազատած են։

Առնուազն 300 Մաղէր և Մարթին կրող պաշը զօրագներ կային, ասոնցմէ ոմանք Հայոց թաղերուն պաշտպանութեան համար պաշտօն ստացած էին, բայց երբ խուժանը Չարդի սկսաւ այդ պահակները ոչ միայն անմասնեցան ընդդիմութիւն մը չցուցուցին, այլ նաև իրենք ալ սկսան կողոպտիլն մասնակցիլ, մենք մեր աչքովը տեսանք 5-6 տէվրիյէներ որոնք գանձանակ մը կոտրելով մէջի դրամները իրարմէ կը յափշտակէին ընչաքաղցօրէն։

Տարսոնի և չրջականներուն մէջ մեռնողներուն թիւը 700ը կ'անցնի, նիթթան վնասը 600 000 օսմ. ոսկի կը հաշուեն ոմանք, իսկ ուրիշներ մինչեւ մէկ միլիոն կը գնահատեն։ Հայոց եկեղեցին թալանուելէ վերջ կրակի տուին բայց քարաշէն ըլլալուն համար չայրեցաւ, սեղանը, Խաչերը, պատկերները, նուիրական գիրքերը ամէնքն ալ Չալնարուած և հրդեհուած են։

Հիմա պաշարման վիճակ հրատարակուած է. 500ի չափ զօրք եկաւ և դեռ նոր զօրք կը սպասուի։

Ատանայի տեղական կառավարութիւնը այս խուժդուժ հակասահմանադրական ասնրաւութիւնները իրագործելէ վերջ, կը ջանայ ամբողջ պատասխանատուութիւնը հայութեան վրայ բեռցնել ամենավատ ամբաստանութիւններով, մինչդեռ կոտորածին չաբաթներ առաջ ծրագրուած և կազմակերպուած ըլլալը բացայայտ է, և Սամ. Խորհրդարանն ալ գրեթէ լիովին համոզուած ըլլալ կը թուի այս մասին։ Քաղաքս հանող երիտասարդ հաղարապետ մը իր մէկ մասնաւոր ճառի մէջ «Այս բոլոր Չարդերուն պատճառը խայն Համիտն է, բայց ուրախ եմ ձեզ յայտարարելու որ այսօր այդ ստորին և վատաւարդ գազանը գահընկէց եղած է, այդ մարդասպանն էր որ Օսմանեան զանազան տարերուն մէջ խովութիւն կը ձգէր» ըսաւ։ Հիմա Ատանայի Հայոց ճակատագիրը Պոլսէն դրկուած Բենիչ Ցանձնաժողովին ձեռքն է, եթէ արդարասիրութեամբ և անկողմնակալութեամբ խիստ քննութեան ենթարկեն կասկածելիները, հայը անմեղ և ճակատագ դուրս կ'ելլէ այս տխուր կացութենէն։

Ընդհանուր հակազդեցութիւն մը ծրագրուած ըլլալը դեռ ոմանք չեն ընդունիր և կ'ըսեն թէ Ատանայի դէպքը որ է յարաբերութիւն չունի Պոլսոյ դէպքին հետ։ Բայց երբ Չարդողները «Ծաչասուն սուլթան Համիտ» պօռալով կը սկսին իրենց վայրագ չահատակութիւններուն, ա՛լ կասկած չմնար և մենք վստահաբար կըրնանք յայտարարել թէ այս Չարդերը Եըլտզի իրատէով տեղի ունեցան։

Ազատութեան բանակը այն ատեն միայն կրնայ իր նուիրական պաշտօնը իրապէս կատարած ըլլալ, երբ անկեղծօրէն աշխատի բռնակալութեան ներկայացուցիչները արմատախիլ ընել Ասիական Թուրքիոյ ծոցէն։ եւ ցաւալի է ըսել թէ Ասիական Թուրքիա դեռ հակասահմանադրական աղաներով, պէյերով, իմամներով և կառավարական պաշտօնեաներով լի է։

Զանազան կողմերէ տեղւոյս արկածեալներուն համար նպաստներ կը հասնին, բայց անբաւական են, նոր նպաստներու պէտք ունինք, 500ի չափ Հայեր հացի կը կարօտին, տուներնին արդէն մոխրակոյտերու վերածուած են։ Իտարէի էօրֆիլէն ալ կարծես Հայերուն համար է, Թուրքերը և Ցոյները կրնան հրման առնել և Մէրսին երթալ, իսկ Հայերը երբե՛ք։

Պոլիս Հայերը կը նկատուին իբրեւ ազատականներ, իսկ հոս մեր ազգացումներով առգրաւուած Հայերը ապրանքի կը յորջորջուին։ Հոս սահմանադրութիւնը անուն մըն է միայն տակաւին։

ԵՍԱՅԻ Մ.ԷԼԷՔԵԱՆ

Տարսոն-Գոլէճ, 29 Ապրիլ 1909

ԿԱՑՈՒԹԻՒՆԸ ՀԱԼԷՊԻ ՄԷՋ

Օսմանիճէր Լոյսի Թղթակիցը Մայիս 10 թուով կը գրէ.— «Ապրիլի երկրորդ կիսում Հալէպի նահանգին արեւմտեան և հիւսիսային արեւմտեան գաւառակներում մէջ կատարուած Չարդերէն ետք, տակաւին ուէ անդորրութիւն վերադարձած չէ։ Կարաւաններու հաղորդակցութիւնը բոլորովին ընդհատուած է, ամէն առուտուր դադրած, կանխիկ դրամ գրեթէ չկայ։ Ժողովուրդին լաւագոյն չրջանակներուն, նոյն իսկ իսլամական չրջանակներուն մէջ, ընդհանուր է «մա՛ գազմիսը որ, եթէ գարշելի Չարդերուն գրգռիչները անմիջապէս չպատժուին ամենախստ կերպով, այս շնական գործողութիւնները ոչ չատ հեռու ժամանակէն պիտի կրկնուին։ Ամէն պարագայի մէջ վատահութիւնը պիտի չվերահաստատուի մինչեւ որ յանցաւորները չը պատժուին։ Դիժբախտաբար տակաւին ուէ նշան չկայ թէ կառավարութիւնը արդարութիւնը գործադրելու որոշումը տուած ըլլայ վերջապէս, գտնէ գիտենք որ Հալէպի Վալիին կողմէ հարուածեալ գաւառակները զրկուած քննիչ յանձնաժողովները չե՛ն կազմուած ա՛յնպէսի մարդոցմէ, որոնցմէ կարելիանք սպասել խղճամիտ տեղեկատուութիւն մը։ Արդէն հիմակուընէ սկսած են դժբաղդ Հայերը ամբաստանել թէ ա՛նոնք առիթ տուած են Չարդին, գործ մը՝ զոր կատարեցին Քիւրտերն ու Չերքէզները, իրենց կենակ ունենալով բէսիկները։ Բոլոր քրիստոնեաները կը յուսան թէ ուղղակի Կ. Պոլսէն ձեռք պիտի առնուին ա՛յնպիսի միջոցներ, որոնք վերջապէս վախճան մը տան մարդկային իրաւունքներու դէմ այս ամօթալի զազրագործութեանց կրկնումին։ Պիտի պըսակուի՞ արդեօք այս յոյսերը։»

«Օսմանիչէր Լոյսի» Խմբագրութիւնը իր կողմէ հետեւեալը կը յարէ.— Այդ հարցումին ա՛ռէն կը պատասխանենք.— Խորապէս համոզուած ենք որ անկարգութեանց պատճառ եղողները իրենց արդար պատիժն պիտի չկրնան խուսափիլ։ Որոշուած է որ Ատանոյնուն մարքուի բէսքիսիանէ և սնրագործ տարրերէն։ թէ՛ Վահանպեան և թէ Բարլամենթը, մանաւանդ Մահմուտ Նէվզէթ փաշա խոստացած են որ Ատանայի, Անտիոքի, Հալէպի եւ ուրիշ տեղերու սնրագործութիւնները պիտի քաւուին։ Ամենափոքր պատճառ մը չկայ տարակուսելու այս խոստումներուն արագ եւ կէտ առ կէտ գործադրութեան։

ՎԻԵՆՆԱՅԻ ԿԱՑՍԵՐԱԿԱՆ ՏԵՍԱԿՑՈՒԹԵԱՆ ԱՐԴԻՒՆՔԸ

Կէս պաշտօնապէս հետեւեալը հրատարակուեցաւ Վիեննայի թերթերուն մէջ.—

Վիեննայի մէջ երկու կայսրերուն տեսակցութիւնը բացարձակ համաձայնութիւն զոյացուց համաշխարհիկ կացութեան բոլոր երեւոյթներուն եւ տեսութիւններուն մասին։ Սակայն երկու կայսրերուն կամ երկու կառավարութիւններուն միջեւ նորագոյն պայմանագրութեանց հարկ չէ տեսնուած միջազգային քաղաքականութեան խնդիրներուն համար։ Թուրքիոյ կացութիւնը ուշի ուշով նկատի առնուեցաւ, եւ բոլոր պատահականութեանց եւ կարելիութեանց առթիւ ո՛չ միայն Գերմանիա եւ Աւստրիա, այլ նաեւ Իտալիա բացարձակապէս համաձայն են արդէն։

ԱՏԱՆԱՅԻ Աղէտեալներուն ի նպաստ Մաքրիգիւղի Տաճան վարժարանի ուսանողներու մէջ կատարուած հանգանակութեան երրորդ ցանկն է հետեւեալը.— Նուպար Ցակոբեան, Անդրանիկ Ցովհաննէսեան, Նշան Տէմիրճեան, Ա. Բէրբէտեճեան, Ալթունեան Եղբարք Ցական, Սաթենիկ Խանճեան, Ստեփան Անտոնեան 20ական. Նուարդ Ղալֆեան 10, Սիրանոյշ Եթմէքճեան 2 ղ.։ Գումար 77 ղ.։ որ յանձնուած է Խմբագրութեանս։

ԱԶԳԱՅԻՆ

ԱԶԳ. ՀԻՒԱՆԴԱՆՈՑԻ 77ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԸ

Երէկ հանդիսաւոր կերպով տօնուեցաւ Ազգ. Հիւանդանոցի 77րդ տարեդարձը Համբարձման տօնին առթիւ։ եկեղ. արարողութեան կը Նախագահէր Վեհ. Հայրապետը։ Այս առթիւ անագին բազմութիւն մը փութացած էր։ Քարոզեց Վեհ. Հայրապետը։ Եկեղեցականներու եւ ուրիշ հրաւիրեալներու համար սեղան մը սարքուեցաւ։ Բաժակաճառեր արտասանուեցան։ Որբուհիները Ազգ. և Վեհ. Հայրապետին ձօնուած երգեր երգեցին։ Ս. Հայրապետը նուիրեց 10 ոսկի, և ուրիշներուն ալ նուէրներով երէկ գոյացաւ 30 ոսկի։

ԿԱՒԱՂԱՆԸ ԱՏԱՆԱՅԻ ՄԷՋ

Օսմանիճէր Լոյսի հրէկի թիւին մէջ հետեւեալը կը կարդանք.—

Պատերազմական ատեանը Ատանայի մէջ սկսած է արդէն իր գործունէութիւնը։ Շատ մը յանցաւորներ ձերբակալուած են, և մէկ քանի պարագաներ արդէն իսկ կատարեցան։ Ամբողջ նահանգին մէջ կատարեալ անդորրութիւն կը տիրէ։ Թալանողները իրենց կողոպուտները կը տանին մզկիթներն ու եկեղեցիները։ Բոլոր տուները կը խուզարկուին, արգիլուած զէնքերն ու զգոյշցուած առարկաները հաւաքելու համար։

* * * Դարձեալ նոյն թերթին մէջ կը կարդանք.— Հ. Ց. Դաշնակցութեան եկած հեռագիրը մը կ'ըսէ.— Նոր Բէյժիրն անկիրթ Լատաքիոյ գոմիսարիին եղող Պայազիտի գոյմագամը պաշտօնանկ եղաւ Երզրումի իշխանութեանց կողմէ։ Ասոր պատճառը նոյն պաշտօնէին սահմանադրատէր զգացմունքներուն մէջ պէտք է փնտռել, զորս չեն քաշեր բէյքսիսնէնները։

ՀԱՅՑԱՍԷՐ Պ. ՖԱՎԸ

Երեքշաբթի օր Սեբաստիայէն Պոլիս հասաւ Զուլիցերիացի յայտնի հայասէրնեբէն Պ. Էֆոպտ Ֆավը, որ տասնեակ տարիներէ ի վեր ամբողջովին նուիրուած է հայ որբերու պաշտպանութեան և հոգածութեան։

Պ. Ֆավը՝ Ժընէվի ազնուական ընտանիքներէն է և նախագահը՝ Զուլիցերիական Հայ Որբախնամ ընկերութեանց, որ ուրն կողմէ ամէն տարի անձնուիրաբար մէկ անգամ անպատճառ կ'այցելէ Հայաստան, ուր արդէն մէկ քանի հայկական գլխաւոր կեդրոններու մէջ հաստատած է որբանոցներ։ Այնքան նուիրուած է այս մարդասիրական գործին՝ որ հակառակ իր եօթանասուն տարիներուն, սովորեցաւ Հայերէն և իր տանը մէջ անգամ հայ ծառաներու. ու բարեկամներու հետ կը սիրէ խօսիլ Հայերէն լեզուով։

Ցարգելի և չատ համակրելի հայասէրը որ նոր կը դառնայ, ինչպէս ըսինք, Սեբաստիոյ չրջանէն՝ մեծ դառնութեամբ ու խորին վշտակցութեամբ կը խօսի այդ կողմերու հայկական ծանր թշուառութեան վրայ։

Պ. Ֆավը առջի օր մեկնեցաւ Իզմիր և Պարտիզակ, ուրկէ այսօր վերադառնալով Պոլիս, մէկ երկու օր միայն պիտի մնայ և պիտի չարունակէ իր ճամբան դէպի Բիւնէ։

Որքան պատեհ առիթին պիտի ըլլար, եթէ մայրաքաղաքի Հայութեան կողմէ մը ժողովուրդին երախտագիտութիւնն ու շնորհակալութիւնը արտայայտուէր յարմարագոյն եղանակով մը՝ ազնիւ ու պատուական Հայասէրին։

Ս. ՀԱՅՐԱՊԵՏԻՆ կողմէ Մ. Զերազ էֆ. նախընթաց օր ռուս դեսպանատունը երթալով շնորհաւորեց Զարին ծննդեան տարեդարձը։

Ս. ՀԱՅՐԱՊԵՏԻՆ հրաւիրակները տակաւին չեն հասած Պոլիս, հակառակ այլ ուր եղած հրատարակութեան մը։

ԿԱՐԻՆԷՆ Ապրիլ 29 թուով կը գրեն մեզի.— Ռէլաքսիօնէական շարժման համար արիւնոտ ոսկիներով զրկուած 8 անձերը ապրիլ 8ի առաւօտն իսկ մեկնած են. իսկ զինուորները այս ատենուան զրգռողներ ու ընդհանուր կոտորած յառաջ բերել ուզող զօմանատան նուսուքի բաշան ուզղակի Պոլիս կանչուած է դատի քաշուելու համար։ Կը հաստատի թէ նոյն օրն իսկ Հայերը կոտորելու համար ուղղակի Երզրումէն՝ ոճիրներու բոյնէն հրաման եկած էր. 6 ժամ տեւելու պայմանով, սակայն հեռագրատան անօրէնը սոյն ժամապիւռ հեռագիրն իր հասցէին չէր յանձնած։ Նեղգոյն մասգրօրը իր կործանման մզղճաւանդովը սարսռած՝ վերջին անգամով հաղարաւոր Հայերու արիւնովը կ'ուզէր իր անիծեալ գահն ապահովել... ու իր այս յուսահատ եւ մարդասպանական գայթակղման մէջ իր թունալից նետերուն զոհը եղաւ տարաբախտ Ատանա իր հազարաւոր զոհերով։

ՑԱՐՈՒԹԻՒՆ ԷՖ. ՄՈՍՏԻՉԵԱՆ, Մանասարդի դատական քննիչը երէկ Պոլիս ժամանեց։

* * * Հայերէնագէտ Մէյմէտ Սիւրէյա պէյ, քննիչ մասնաւոր վարժարաններու, Ատանա մեկնելիք յանձնաժողովին պիտի ընկերանայ։

ՊՐՈՒՍԱՅԻ Արուեստասիրաց Խումբը վաղը (չաբաթ) իրիկուն «Սեւ Հողեր»ու ներկայացումը պիտի տայ Ազատութեան լսարանին մէջ ի նպաստ Ատանայի աղէտեալներուն։

ՍՏԱՅՆԵՐ «Ապտիլ Համիտի վերջին խաղը» ։ Կեդրոնատեղի Պ. Պալենցգրատուն։

ՕՍՄ. ԵՐԵՍՓ. ԺՈՂՈՎԻ 78ՐԴ ՆԻՍՏԸ

ԿԱՅՍՐԸ ԺՈՂՈՎԻՆ ՄԷՋ

ԳԱՅԼԱԿԸՆԸ

ԵՐԿՈՒՄԻՆ ԱՌԱՒԱՐՈՂ ԵՐԵՍԷՓՈՒՆՆԵՐ

Երէկ մեծ ոգեւորութիւն կար Խորհրդարանին շուրջ։ Սուլթանը պիտի գար իր երդումը հաստատելու եւ երեսփխանները հաւատարմական երդում պիտի ընէին վենա պէտին համար։ Սուլթանը պիտի գար ծովի ճամբով, Թօփ գաբուի պալատը եւ անոր Սօղուլ Զեշմէի դուռունէն ելլելով, Թրամվէյի ճամբէն կառքով պիտի գար Խորհրդարան։ Այս կարճատեւ ճամբուն վրայ արդէն յարգարումներ եւ պատրաստութիւններ եղած էին։ Ամբողջ ճամբուն վրայ մինչեւ Այա Սոֆիայի հրապարակը երկու շարքի վրայ զինուորներ բարեւի կեցած էին, նուագախմբերով։ Բազմութիւնը կանուխէն խռնուած էր ամէն կողմ։ Խորհրդարանին մէջ խնամ տեղի ունենալու համար խիստ հսկողութիւն կը կատարուէր եւ մէկ թնթիթ մէկ հոգի միայն կ'ընդունուէր։ Նաեւ գաւառական թերթերուն թղթակիցները չէին ընդունուեր։ Երեսփոխանները, ոչխարականները բէյէնկօթ հագած էին, իսկ կրօնաւորները սեւ վերարկու։ Նկատելով որ Սուլթանը բեմ պիտի ելլէ, նախագահի աթոռին քով կարմիր թիկնաթոռ մը զրուած էր անոր համար։

Սուլթանը ժամը 7 ին պիտի գար, ինչպէս առջի օր որոշուած էր, ժողովը անկից առաջ զբաղեցաւ օրակարգով, որ էր մամուլի օրէնքին վերաքննութիւնը։

Ժողովը ժամը 3ին բացուեցաւ եւ հաստատուեցաւ անցած նիսաին տեսնագրութիւնը։ Ետքը անցան օրակարգին։ Նալլ էֆ. առաջարկեց որ օտար վիճակներուն տուած բարի ոգ ծանրութիւնը արգիլուած է, ատոնց ծանուցումը թերթերու մէջոցաւ կատարելու ալ արգիլուի։ Ուրիշներ ըսին թէ քանի որ տոմսերը արգիլուած են, արդէն յայտարարութիւն չըլլար, որով Ժողովը մերժեց եղած առաջարկը։

Երկու երեսփոխաններ ալ կ'առաջարկէին որ ցրուիչները եւ լրագրավաճառները չկարենան թերթին կամ յանելուածին մէջի լուրերը չարիաղանցելով պօռալ կանչել։ Զօհրապ էֆ. բուռն կերպով ընդդիմացաւ, զայն անարժանաքանական, անարդար հռչակելով։

Թէֆիզ.—Պէ՛տք է այդ տրամադրութիւնը։ Ես կը յիշեմ հատ մը որ օր մը կը պօռար «Թօքաթիանի մէջ հաց

բացայայտ Օսմ. գահը, որուն օրինաւոր ժառանգորդն էր։ Այսօր սրտովին ուրախ և պանծալի կը զգամ ինքզինքս, Օսմ. մեծ ազգը մարմնաւորող Մերակոյսին և երեսփոխանութեան միջեւ զանուելուս համար։ Կը հաւատամ որ, մեր ազգին անհատները իրենի պէս համոզուած են թէ, մեր նուիրական հայրենիքին երջանկութիւնն ու փրկութիւնը, անոր ամէն տեսակ յառաջդիմութեան արժանանալը՝ կախում ունի Շերիի և քաղաքական օրինաց համապատասխան եւ սահմանդրական գրութեան հաստատուն եռանդով ու հաստատամտութեամբ մեր երկրին մէջ տեւականօրէն գործադրուելէն։ Ահա, այս տեսակ համոզում մը և փափաք մը մնուցանելով, իրենի համար խիստ նուիրական խղճի պարտք մըն է, առանց բացառութեան, իմ բոլոր դպատակներուս երջանկութեան եւ հանրաստութեան կատարելութեան միջոցներուն համար աչխատիլ ձեռք եկածին չափ, և այս մեծագոյն իղձիս յաջողութիւնը կը խնդրեմ Աստուծմէ։

«Մեր նուիրական հայրենիքը որ կարեւոր շրջան մը անցուց, վնասները դարմանելու և զարգացումը ապահովելու համար, ամէն ժամանակէ աւելի հիմա կարօտ է իր զաւակներուն հայրենասիրութեան և միաբանութեան, ուստի, անկասկած եմ որ, օսմանցիութեան ընդհանուր անունին տակ ապրող բոլոր ցեղերն ու ազգերը, այս հայրենասիրական պարտքը կատարելու համար միասիրտ և միաբան պիտի աչխատին։

«Ատանայի մէջ տեղի ունեցած չփոթութեան համար խիստ ցաւած եմ։ Այսուհանդերձ, չփոթութեան առաջքը առնուած է ու որոշուած է որ այս դէպքին մասնակցողները պատժուին, և յարձակումներէ մնասողներուն կարօտութիւնը ամոքելու համար ալ կատարեալ օգնութիւն ըլլայ։ Բարեպաշտութեան, մարդկութեան և հայրենասիրական զգացումներու հիմնովին հակառակ այս կարգի տխուր պարագաներ ու դէպքեր, Աստուծով, մեր երկրին ո՛չ մէկ կողմը չեն ծագիր ասկիցնտք։ Կը պահանջենք որ այդ տեսակ դէպքերու ծագման տեղի չտալու, ամէն կողմ անդորրութիւնը և բարւոք կենցաղը ամրապնդելու մասին կառավարութիւնը ամէն տեսակ դրական և ազգու միջոցներ ձեռք առնէ։ Անցեալին ցեղական անհամաձայնութիւնները և վէճերը բոլորովին հաթելով, հայրենիքի զաւակները, ձեռք ձեռքի տուած, սիրով օգտուին մեր երկրին բնական հարստութեանց աղբիւրներէն և ճշմարիտ հանգստութեան ու երջանկութեան մէջ պիտի ապրին։

«Վարչական դատական և ելմտական խնդիրներու մէջ կարեւոր է բարենորոգութիւն և վերակազմութիւն գործադրելը։ Նաև, պէտք է ամէն ջանք ի գործ դնել ցամաքային և ծովային զօրութեանց աւելի ևս կատարելագործման, կրթութեան տարածման և հանրօգուտ գործերու բազմացման համար։ Այս նպատակին իրագործման համար ալ ձեր երկու յարգելի Մարմիններուն օգնութեան կը յենում և կ'սպասեմ։

«Սահմանադրական վարչութիւնը զոր յաջողեցանք ճշմարիտ և ամուր հիմի մը ա յ հաստատել, արտասահմանի մէջ ալ երկրին արժանիքը և վարկը աւելցուց։ Մեծ տէրութեանց և միւս կառավարութեանց հետ մեր բարեկամ յարաբերութիւնները կը շարունակուին։ Մեզի համար խիստ կարեւոր է անկեղծ և բարեկամական հիմերու վրայ կրթած մեր այս յարաբերութիւնները ատիճան մը ևս ամրապնդելու և տեւականացնելու համար աչխատիլ։ Աստուած մեզի և ամէնքը իր երկնային յաջողութեանց արժանացնէ»։

Դատաւորը քանիցս ընդհատուեցաւ ծափերով և կայսրը շնորհակալութիւն յայտնեց։ Երբ աւարտեցաւ ընթերցումը, դարձաւ Սայիտ փաշայի և Անմէտ Բիզա պէյի և անոնց ձեռքէնառաւ իր արտասանելիք խօսքման գիրը և կարդաց։ Ահա այդ բանաձեւը։—

«Շերը Շերիֆը և Սահմանադրութիւնը կատարելապէս յարգելով, ազգային իրաւունքներուն և հայրենիքին չանուն պահպանութենէն երբեք չբաժնուելու համար երդում ըրած էր։ Հիմա կը փափաքիմ որ դուք ալ ձեր փոխադարձ երդումը կատարէք»։

Կարդալէ ետք, թուղթը ծոցը դրաւ և որպէս զի երեսփոխաններուն ալ երդումը կատարուի, առաջնորդուեցաւ Կայս. օթեակը։ Հոն ելլելուն դարձեալ ծափածաւուեցաւ և տեսնելով որ երեսփոխանները ոտքի վրայ են, ըսաւ.

—Խնդրեմ, հանգիստ ըրէք։

Ինք նստաւ և ժողովականներն ալ նստան։

Ժողովին կը նախագահէր Սայիտ փաշա։

Այս պահուն կայսեր լուսանկարը առնուեցաւ։

Պահ մը խորհրդակցութիւն կատարուեցաւ նախագահներուն և մէկ քանի երեսփոխաններու մէջև, երեսփոխաններու երդման բանաձեւին մասին և որոշեցին գրել բանաձեւը։

Խօսողներու բեմին առջև կեցած էր եպարքոս Հիլմի փաշա։

Երդման սա բանաձեւը գրուեցաւ զոր նախ կարդաց Մերակոյսի նախագահ Սայիտ փաշա և ետքը Երեսփ. Ժողովի նախագահ Անմէտ Բիզա պէյ։ «Վեհ. Կայսեր, հայրենիքին, ազգին և սահմանադրութեան հաւատարիմ մնալու ու մեզի յանձնուած պարտականութիւնները յարգելով, հաւատարիմ կերպով ծառայելու համար կ'երդնում. վալլահի, պիլլահի»։

Անմէտ Բիզա պէյ էր երդումը կատարող փոխանակ վալլահիի «հաւատքիս և պատուիս վրայ կերդնում» ձեւով։ Թէև հօգաներ առարկեցին, բայց անցաւ։

Երբ կարգը եկաւ ամէնուն երդման, սկսաւ խնդիր ըլլալ թէ զատ զատ կրկնելը երկար ժամանակի կը կարօտի։ Ոմանք ըսին թէ կարդացուի և մնացեալներն գոչեն «վալլահի»։ Բայց եպարքոսը մերժեց։ Եպարքոսը կարդաց երդման բանաձեւը և ժողովականները ձեռքերնին բարձրացուցած «վալլահի» գոչեցին։ Յետայ, սկսան կարդացուիլ Մերակուսականներուն անունները, որոնք մէկիկ մէկիկ եպարքոսին առջև երթալով կրկնեցին «այս գրուածին համար վալլահի» մինչ եպարքոսը կը նշանակէր անոնց անունները։ Այս պահուն Կայսրը նստած էր օթեակը և կը տեսակցէր Մուխթար փաշայի հետ, մէկ կողմէն դիտելով երդման տողանցը։ Ետքը կատարուեցաւ երեսփոխաններուն երդումը միևնոյն ձեւով, զատ զատ ըսին.— «Այս գրուածին համար վալլահի պիլլահի»։

Երբ կարգը եկաւ Նիսիմ Մազլեան էֆ.ի, յարեց.— «Որչափ ատեն որ կայսրը հաւատարիմ է սահմանադրութեան, այդ գրուածին վալլահի, պիլլահի։

Եպարքոս.— Այս «քովանդակութեան» պէտք է ըսէք։

Նիսիմ Մազլեան.— Ատոր մէջ չկայ Կայսեր սահմանադրութեան համար հաւատարմութեան պայմանը, անոր համար կրկնեցի։

Եպարքոսը խնդրեց որ բանաձեւին վերայ կրկնէ իր երդումը սակայն Մազլեան էֆ.ոտքի կելլելով դարձեալ նաեւ ուսերը թօթուելով եւ քիթին տակէն բառեր մը ըսելով։

Պուչոյի կարգը երբ եկաւ ըսաւ.— Վալլահի։

Զայներ.— Չըլլար, ամբողջ ըսէ։

Եպարքոսը.— Այդպէս չըլլար պէտք է ըսես «այդ թուղթին բովանդակութեանը»։

Պուչօ չըսաւ, Ժողովը խռովեցաւ, գլուխները ամէնքը դարձան Պուչօյի նստած ծայրայեղ աջակողմեան անկիւնը։ Ոմանք պոռացին, չէ ըսաւ, ոմանք «ոչ» գոչեցին։

Իսմայիլ Հաքգը (Կիւմիւլճինէ)։— Երդումը բանի չըլլար։ քանի որ չըներ, ըսա այսմ պէտք է նկատել։

Վարդգէս.— Քանի որ Վալլահի ըսաւ ըրաւ ըսել է։

Պուչօ.— Ինչ կ'ըլլայ «այդ բովանդակութեանը» ըսելով. ըսի՛։

Ոմանք առարկեցին, ոմանք պաշտպանեցին, և վերջապէս մինդէպը փակուեցաւ։

Ժամը 7.45ին լմնցաւ երդումը։ Հիլմի փաշա իջաւ բեմէն։

Նախագահ Սայիտ փաշա.— Կայսեր գահնստին մէջ փափաք յայտնուած յաւելդիմութեան համար, անհրաժեշտ օրէնքները պատրաստելու խոստում տալ կ'առաջարկեմ. (Զայներ չա՛տ լաւ, այո՛)։ Հետեւաբար, ընդհ. Ժողովը վերջ գտած է եւ Երեսփ. Ժողովը պիտի չարունակէ իր խորհրդակցութիւնը։

Սայիտ փաշա ելաւ նախագահի աթոռէն։ Անմէտ Բիզա պէյ յայտարարեց թէ վեհ. Կայսրը փափաքելով ունկընդրել Ժողովը, հինգ վայրկեան միայն պէտք է դադար ընել և անմիջապէս գումարուիլ։ Շատեր փափաք յայտնեցին իսկոյն չարունակել, բայց չեղաւ։ Կայսրը այն պահուն իջաւ մոնասարը դաշլիճը։

Ժամը 8ին20 մնացած Ժողովը վերաբացուեցաւ։ Կայսրը երբ իր օթեակը մտաւ Ժողովականները ադ ելան և նստան։ Այս անգամ Կայսեր քով նստած էր եպարքոս Հիլմի փաշա։

Շարունակուեցաւ Մամուլի օրէնքին վիճաբանութիւնը։ Շատ մը երեսփոխաններ խօսք առին ինքզինքին ցուցնելու համար... Սակայն կայսրը հազիւ հինգ վայրկեան նստած եւաւ ու մեկնեցաւ, երեսփոխաններու բուռն ծափերուն շնորհակալութիւն յայտնելով։ Ժողովը վերջացաւ։ Կայսրը իջաւ վար և զինուորական ողջոյններու մէջ մեկնեցաւ իր կառքով և եկած ճամբով դարձաւ պալատ։ Կայսեր Խորհրդարան մտած և մեկնած ատեն Խատէմի Խասայի սպաները բարձրաձայն երգեցին «Մաղրուբ օրմա փատիշահիմ, սէնէն պէօյիւք Ալլահ վար» (սի՛ հպարտանար թագաւոր, քենէ մեծ Աստուած կայ), ինչպէս երգած էին թրակապութեան օրը՝ Կայսեր մղկիթ մտած և ելած ատենը։

77ՐԴ ՆԻՍՏԸ

ԺՈՂՈՎԸ ԿԸ ԲԱՐԿԱՆԱՑ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ

Զորեքչաբթի ժամը 5½ին բացուեցաւ Ժողովը նախագահութեամբ Թալէաթ պէյի։ Կարդացուեցաւ եկեղեցական գիր մը թէ Ալայլը այն սպաները որոնք պաշտօնէ հանուած էին, դարձեալ ծառայութեան մէջ պիտի դրուին քիչ մը ատեն ուսանելէ ետք։ Ժողովը ի տեղեկութիւն լսեց այս կարգադրութիւնը։

Ներքին գործոց նախարարութիւնը տօքթ. Տաղաւարեան էֆ.ի հարցապնդման պատասխանելով, կ'ըսէր թէ երկրագործներուն բաժնուելիք սերմնցուին ուշանալուն համար բացատրութիւն պահանջած էր երկրագործական նախարարութենէն, և այս առթիւ ալ պէտք եղած հրահանգները տուած էր։

Նոյն նախարարութիւնը ուրիշ գիրով մը կ'ըսէր թէ թէև Երեսփ. Ժողովը որոշած էր որ Երկրագործական պանքան 100,000 ոսկի բաժնէ երկրագործներուն, սակայն պանքան յայտարարած էր թէ այս տարի 100,000 ոսկի բաժնած ըլլալով, տեւելին չէր կրնար ընել։ Հետեւաբար, այդ դրամը վճարելու հրամանը ետ առած էր Բ. Դուռը։

Թալէաթ (Էնկիւրի).— Կարօտութիւնը տ՛ինքան չատ է որ 100,000ով, 500,000ով բան չըլլար, պէտք է երկու միլիոն ոսկի բաժնել։

Զօհրաբ.—Մեր բոլոր գործերը խօսքեր կը մնան միայն։ Այսօր կը տեսնենք որ Ժողովին փութով որոշած մէկ պէտքը՝ չէ գործադրած կառավարութիւնը։ Ինչո՞ւ յանկարտարները պատասխանատու չենք բռներ։ Մենք պահանջելինք որ յանցաւորները երեւան հանուին և անոնց կառավարութիւնը մեղի մոտայ կը կարդայ։ Եթէ կառավարութիւնը թողանք որ այնպէս թերանայ, վաղը մեր բոլոր որոշումները ոչինչ արժէք կ'ունենան (բուռն ծափեր)։

Շատ մը երեսփոխաններ համամիտ եղան Զօհրաբ էֆ.ի առաջարկին։

Ճավիտ.—Այս առաջարկը կառավարութենէն եկած և կարեւորութեանը համար մէկ ժամուան մէջ որոշած էինք։ Երբ այսքան կենսական պէտք մը չի կրնար հայթայթել կառավարութիւնը, այն ատեն ի՞նչպէս երկրին ելմտական կեանքը պիտի կրնայ վարել։ Պատճառ տուողները անպատճառ պէտք է պատասխանատու բռնուին։

Մուսթաֆա Ասրմ.—Այդ 100,000 ոսկին ո՛չ թէ երկրագործական զարգացման համար էր, այլ հացի՛ համար։ Հետեւաբար ատոր յետաձգման պատճառ եղողներուն գլուխը պիտի ցնցուին ատոր։ Պէտք է պատասխանատու բռնենք։

Վերջապէս, Ժողովը մեծամասնութեամբ որոշեց գրել որ անմիջապէս զրկուի դրամը և յետոյ, հարցապնդել նախարարութիւնը՝ այդ յետաձգման պատասխանատուներուն մասին։

Վարդգէս էֆ.ի դիտել տուաւ թէ Ատանայի քննիչ յանձնաժողովին անդամներէն հօճա Շեվքի էֆ.ի հրաժարած է, հետեւաբար իր տեղը ուրիշ մը պէտք է ընտրել և գրել եպարքոսութիւն որ յանձնաժողովին մեկնումը փութացնէ։ Նախագահը ըսաւ թէ Ժողովին երիրորդ մասին մէջ կ'զբաղին ատով։

Ետքը անցան օրակարգին, որ էր երեքուն պարտքին խնդիրը։ Ճավիտ պէյ բեմ ելլելով բացատրեց այդ պարտքին վճարման համար պատրաստուած օրինագիծը։ Բաւական երերուն պարտքին քանակը ինք կառավարութիւնն ալ չգիտեր. որովհետև շատ մը պահանջատէրներ դեռ դիմում ըրած չեն և ասոր համար օրինագիծ մը չնուաած է զոր դանդաղ կառավարութիւնը ամիսներով իր քովը վար դրաւ. երերուն պարտքը Թուրքիոյ մէկ դէշ հիւանդութիւնն է, ոչ մէկ երկրի մէջ երերուն պարտքերը այսքան կը դիզուին, ոմանք ելան թէ ըսենայս պարտքը 300միլիոնի կը հասնի։ Բնականաբար կառավարութիւնը անմիջապէս չի կրնար վճարել 15-20 միլիոնոց պարտքեր։ Ուրեմն պէտք է կամ փոխառութիւն մը կնքել կամ պիւտճէին մէջ ամէն տարի գումար մը դնելով։ Բայց այս ալ ընելու համար պարտքին քանակը պէտք է գիտնալ։ Հետեւաբար, այս պէտք է ըսել նախ։ Ժողովը փոքր վիճաբանութենէ մը ետք ընդունեց օրինագիծը։

Ժողովին երկրորդ գումարման կը նախագահէր Անմէտ Բիզա պէյ որ առուն պալատ դացած էր։ Սուլթանին Խորհրդարան գալուն արարողութեան մասին տեղեկութիւններ տուաւ և յարգեց թէ Սուլթանը պիտի երդնու սա ձեւով. «Պէյանթի օրը երդում ըրած էի, եւայլն»,

Երեսփոխան մը.— Եթէ Սուլթանը երդում չընէ, Սահմանադրութիւնը պիտի վանգուի՞։

Ուրիշներ.— Փոխանակ ըսելու թէ «երդում ըրած էի» պէտք է ըսէ «կ'երդնում»։

Նաֆի փաշա.— Թուրքերէնի մէջ «երդում ըրած եմ» ըսելը «կ'երդնում» ըսել է։

Անմէտ Բիզա.— Դարձեալ երեսփոխաններուն երդումին, մէկիկ մէկիկ պիտի ընեն և ոչ թէ հաւաքաբար, ինչպէս կ'ընեն բանակները։

Պուչօ.— Մեր երդման բանաձեւը թող նախագահը կարդայ և բոլոր երեսփոխանները միաբերան թող կրկնեն։

Շատեր չընդունեցին այս։ Ուրիշներ ըսին թէ երբ մէկիկ մէկիկ երդում ըլլայ, Զակոն վայրկեանէն 500 վայրկեան պէտք է։ Ուրիշներ առաջարկեցին որ երեսփոխանները անցնին կարգով բեմին առջեւէն, միայն վալլահի ըսելով։

Ժողովը եաքը չարունակեց մամուլի օրէնքին վիճաբանութիւնը, իր ուսանդական սեղմումները չմուծելով։

ՆԵՐՔԻՆ

«ՆՈՐ ԺՈՒՌՆԱԼ»ՆԵՐ.—Եվրոպի պարլատան գաղանիքները հետզհետէ կը յայտնուին այն ժուռնալներով որոնք ձեռք կ'անցուին։ Պետական խորհրդոյ երբեմնի անդամ Թայեար պէյի ժուռնալներն են հետեւեալները որոնք կը քննուին պատերազմական ատեանին կողմէ.—

«Կ. Պոլսոյ մէջ խռովութիւն մը յարուցանելու համար գտնուած զինուորներուն մեծ մասը մոցած է։ Ի՛նչպիսի ապացոյց որ ուզուի, պիտի բերուի։ Ամէնուն գլուխը կը գտնուի Մէվլանգատէ Ռիֆաթ։ Մէկ քանի օրէն Իթթիհատի դէմ յարձակում պիտի ընեն։ Ամէն պարագայի մէջ արիւն պիտի թափի։ Անձնուիրութեան բերմամբ կը յայտնեմ թէ մեր տէրը այս միջոցիս դրամը պէտք չէ որ իմայէ։»

*** «... ոյս խռովարարութենէն տեղեկագրութիւնները ամբողջապէս իրենց ծրագիրներով երբ կարդացուին մեր տիրոջ կողմէ՝ այս գէշութեան աղբիւրները արգելք ըլլալու համար Ամիր-էլլան(*) և Ֆէթիուլլան շատ մեծ ծառայութիւններ կրնան մատուցանել։

«Մեր տէրը համոզում պիտի դայ, ինչպէս որ հարկ է որ մեր Կայսրը տեսնելու Իրէքլի եւ Տրաքօվայի մէջ բարեկարգութիւնները գործադրելու եւ պաշտպանելու համար։ Ճշմարտէն եկած հիւպատոսական տեղեկագիրներն ալ կը յայտարարին թէ յոռի արժադրութիւնները զարգրած են, կատարուած իրողութիւնը ընդունուած է Ալպանիացիներուն կողմէ, որոնց մէնակ փափաքն է հիմա հաստատուն պահել իրենց ցեղային առանձնաշնորհութիւնները։»

*** Տեղական թերթի մը Մայիս 17 թուով կը հեռագրեն Սկանտիկէն.— Մարտ 31ի դէպքերու մէջնցին Ալպանիա ճամբորդող եւ ժողովուրդը Ժէոն Թիւրքերուն դէմ գրգռելու պաշտօն ունեցող Եուսուֆ փաշան կէս ճամբան բռնուելով, պատերազմական ատեանին յանձնուած է։ 40,002 ոսկի գտնուեցաւ Եուսուֆին վրայ, որ ամէն բան խոստովանեցաւ տեղն ի տեղը։

ՊՈՒԼԿԱՐ ԸՆԿԵՐՎԱՐԱԿԱՆՆԵՐՈՒՆ ՊԱՀԱՆՋՈՒՄՆԵՐԸ.—Մայիս 18 թուով Սոֆիայէն հետեւեալը կը հեռագրեն Օսմանիէեր Լույսի.—Ընկերվարական «Քամբանա» թերթը, որ ժողովրդային խաւերուն մէջ մեծ ծաւալ դտած է և Մակեդոնական յեղափոխական կազմակերպութեան հետ համաձայն կը գործէ, խմբագրականի որ մէջ կը պահանջէ Ապտիլ Համիտը դնել ա՛նպիսի վիճակի մը մէջ, որ այլեւս երբեք վնաս հասցնելու կարող չըլլայ, և կը հրաւիրէ Սահմանադրութեան Ջատագով բոլոր տարբերը միանալ սա՛ սկզբունքին վրայ.— «Ապահեղբնացում, տեղական ինքնավարութիւն և ընդհանուր զինուորագրութիւն։»

ՍՍԻՎԹԱՆ վաղը պաշտօնական ընդունելութիւն պիտի կատարէ Մերակուսականներուն, Եմեսփոխաններուն, հոգեւոր պետերուն եւայլն։

ՈՍՏԻԿԱՆԵԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹԵԱՆ տիտղոսը փոխուեցաւ ոստիկանական ընդհ. անօրէն և այդ պաշտօնին կոչուեցաւ Մաշնար պէյ։

ՊԻԵՐՀԱՆԵՏՏԻՆ ԻԵՆԱՆԻՆ ԱՌԹԻՒ.—Կ. Պոլսէն կը հեռագրեն Վիեննա թէ Պիւրանէտտին իշխան ա՛յն պատճառաւ մնայն պատերազմական պաշտօնատունը տարուեցաւ, որպէս զի ներկայ ըլլայ Նաստը և Ճէվհեր ներքինիներուն և թիւֆենկճիպաշի Առնաուտ Թահիր փաշայի մէկ կարեւոր հարցաքննութեան։ Ասոնք պատերազմական ատեանին պահանջումին վրայ իշխանին ներկայութեանը կրկնեցին ինչ ինչ յայտարարութիւններ։ Իշխանը Մահմուտ Շեվքէթ փաշային առջեւ երդուելով թէ ինք երբէք յանցաւոր չէ, և վստահացուց թէ իր հօրը սիրական զաւակը ըլլալու մասին ընդհանուր կարծիքին հակառակ, ինք ալ իր հօրը կողմէ շատ նեղութիւններու ենթարկուած է, ո՛չ մէկուն հետ կրնար խօսիլ, և տարիներէ ի վեր իրեն արգիլուած էր Եըլտըզի պարտէզին մէկ մասին մուտքը։ Առայժմ իշխանին դէմ ոչ և է ամբաստանութիւն չկայ։

Կ. ՊՈԼՍՈՅ ՖՐԱՆՍԱԿԱՆ ԴԵՍՊԱՆԸ.—Բարիզի թերթերէն ոմանք կը յայտարարեն որ Կ. Պոլսոյ ֆրանսական դեսպան Մ. Ֆոնսթան կը հերքէ ա՛յն զրոյցը թէ Եըլտըզի մէջ գտնուած ըլլան իր զիրքը խախտելու պատճառ եղող թուղթեր, եւ թէ ասոր համար հրաժարական տուած ըլլայ։

Մ. ՆԱՀԱՆԳՆԵՐԸ ԵՒ ԱՐԵՒԵԼԻՅԻ ՔՐԻՍՏՈՆԵԱՆՆԵՐԸ.— Կ. Պոլսէն հետեւեալը կը հեռագրեն Պերլիներ Թակեպլաթի.— Քաղաքական շրջանակներէ առնուած լուրերու նայելով, Մ. Նահանգաց նախագահը էստուարտ թագաւորին դիմեր է, խնդրելով որ մը՛ջոցներ ձեռք առնուին՝ Արեւելքի մէջ քրիստոնէից պաշտպանութեան համար, Կ. Պոլսոյ ամերիկեան դեսպանը արդէն իսկ հրահանգ ստացած է որպէս զի խստիւ պահպանուին ամերիկեան շահերը։ Իրագէկ թուրք շրջանակներու մէջ չսիազանցուած ցոյց կը տրուին Ալպանիոյ եւ Հայաստանի մէջ պատահած դէպքերուն լուրերը, և կը յայտարարեն թէ այդ տեսակ լուրերուն նպատակը ա՛յն է որ շատերը չենն քաշեր զօրաւոր Թուրքիա մը, օտար միջամտութեան դաղափարները ժողովրդականացնելու համար։ Այս կարգին կը վերաբերին նաեւ Ապտիլ Համիտը դատի քաշելու մասին տարածուած զրոյցները։ Իրաւ է թէ Համիտ Սելանիկի մէջ ամենատիտ հսկողութեան տակ առնուած է, բայց իր կեանքին համար վտանգ չկայ։

ԳԱՐԶԱԿՈՒՄ ԱՒՍՏՐԻՈՅ ՀՂՈՒՏԱԿ ԿԸՐՕՆԱՒՈՐԻ ՄԸ ՎՐԱՑ.— Եռաթէն Մայիս 16 թուով հետեւեալը կը հեռագրեն Վիեննա.— Անցեալ ամսուն վերջերը յարձակում մը տեղի ունեցաւ աւստրիական հսկատակ ֆրանչիսկեան վանականի մը՝ Էմիլիո Պաթեաուլի վրայ։ Զանազան նշաններու համեմատ կը կարծուի թէ այս մահափորձը քրիստոնէից դէմ Իսլամներու կողմէ մտադրուած մեծագոյն գործողութեան մը յառաջաբանը պիտի ըլլար, Իթթիհատը Մուհամէտիէի անդամներէն եւ խուժանին դասակարգէն Շէյխ Սուլայ անուն արդէն իսկ չարագործ անձի մը կողմէ թեկադրուած, որ արդէն մեծ դեր կատարած էր աւստրիական վանականներուն դէմ մղուած պայքարին մէջ։ Բայց տեղական իշխանութեանց եւ Ժէօն Թիւրք քոմիթէին կողմէ արգիլուեցաւ գործողութիւնը։ Շէյխ Սուլայ փախած է։ Իսլամական նամօրենական գրգռումներ ծրագրուեր են նաեւ յատուկ պատուիրակներու միջոցաւ Պէյրութի, Դամասկոսի, Պասրայէքի եւ ուրիշ տեղերու համար, բայց արգիլուեր են։

ԶԱՐԻՆ ԾՈՎԱՅԻՆ ՃԱՄԲՈՐԴՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՆԵՂՈՒԻՇՆԵՐԸ.— Թայմզ Բեթերպուրկէն առնելով կը ծանուցանէ թէ Զարն ու Զարուհին Սթօքհոլմ եւ Բոլթավա այցելութենէն վերջ Խրիմ պիտի երթայ եւ անկէց ծովու ճամբով Սեբաստ պիտի անցնին։ Եթէ Թայմզի այս լուրը հաստատուի, կարելի կ'ըլլայ եզրակացնել թէ Կ. Պոլսոյ նեղուցներէն մարտանաւերուն անցքին արգելքը Ռուսիոյ կողմէ իբրեւ չեղեալ պիտի նկատուի, որովհետև Խրիմէն դէպի Եւրոպա Զարին ճամբորդութիւնը մարտանաւով պիտի կատարուի։

ՊԱՇԱՐՄԱՆ ՎԻՃԱԿԸ.— Ոստիկանութեան և ոստիկան-զօրաց ընդհ. քննիչ Դալիպ պէյ կը ծանուցանէ թէ ժողովուրդը արտօնուած է գիշերը պտտիլ փողոցներուն մէջ մինչև ժամ 4½(Ը.Թ.)։ Իսկ Բերայի մէջ այդ արտօնութիւնը երկարաձգուած է մինչև ժամ 6 (Ը. Թ.)։

ՁԵԿՈՒՑԾ.—Տպագրական տեսչութիւնը կը ծանուցանէ թէ ըստ օրում պատշաճ չէ զինուորական կամ այլ բանտարկեալներու և կախաղան հանուածներու մասին անձիշտ եղանակով բաներ գրելը, Գ. զօրաբանակի հրամանատարին գիտցուցով անոնց մասին պատկերներ և յօդուածներ հրատարակելը արգիլուած է։

ՈՉԻՄԱՄՆԵՐՈՒՆ ԶԻՆՈՒՈՐԱԳՐՈՒԹԻՒՆԸ.—Գրած էինք թէ Ցունաց Պատրիարքարանի ժողովականները կ'ուզեն որ ոչխարներէ առանձին զօրագունդեր կազմուին։ «Լա Թիւրքի» այս պահանջը անարդար գտած էր, ըսելով թէ ատիկա չի կրնար այլ և այլ տարբերու միացման նրպատակը մէջնց մը ըլլալ։ «Նէոլոգոս» սակայն այդ պահանջը շատ բնական կը գտնէ, և կը մէջէ ոչխատագիր մը զոր արդի Պատրիարքը, Տ. Եօսիմ, 1879 Նոյեմ. 19ին մատուցած էր Մեծ-Եպարքոսին։—«Դալով ինձի, Բարձրագոյն Տէր, կը խորհիմ թէ այլ և այլ ազգութեանց միջև հաւասարութիւնը պէտք է որ անկեղծ և ըստ ամենայնի իրական ըլլայ։ Մէն մի դատաւոր ժողովրդեան մեծամասնութեան կողմէ խօսուած լեզուին՝ Օսմ. կառավարութեան մօտ իբր պաշտօնական լեզուի խնդիրը կառավարութեան մէջ ամէնէն աւելի էական սարերէն մէկն է որ ո և է կերպով չի կրնար անտեսուիլ։ Նաև, պատիւ, կեանքի և ինչքի ապահովութիւնը՝ կազմակերպութեամբ ոստիկանզինուորներու, հաւասար մասերով, մեչտ համամասութեամբ ժողովրդեան թիւին»։ Այսպէս, յիշատակագրին մէջ կ'առաջարկուի նաև ըստ ազգութեան ընտրել դատաւորները, և պաշտօնեաները ամէնէն ձեռնհաս անձերէն ընտրել, եւն.։ «Նէոլոգոս» մեծագոյն իրաւունք կուտայ այդ պահանջներուն, մինչ «Լա Թիւրքի»ի յօդուածագիրը կ'ընդդիմասօսէ, ըսելով թէ այդ եղանակով, Թուրքիոյ մէջ ա՛յնքան պաշտօնական լեզուներ պիտի ըլլան, որքան ազգութիւններ կան, և նոյն կերպով ալ այլ և այլ ազգէ ոստիկան-զինուորներու գունդեր պիտի կազմուին։

ԻՍՄԱՅԻԼ ԲԷՄԱԼ ՊԷՑ.— Պէյրութի երեսփոխան Իսմայիլ Բէմալ պէյ որ փախած է, մէկ քանի անգամ դահլիճէն սուլթանէն կարեւոր գումարներ առած է, վերջին անգամ առած էր 7000 ոսկի։ Իսմայիլ Բէմալ մեկնած ատեն մոռցած է պանքայի մը վերադարձնել 4000 ոսկիի գումար մը զոր կրցած էր փոխ առնել Օրթաքէօյի իր տունը գնելու համար։

ՌԵԱԳԻՈՆԵՐՆԵՐԸ.— Առջի օր Տրապիզոնէն հոս հասան 46 ռէագիոնէրներ, եւ ուղղակի պատերազմական ատեանը տարուեցան։

ՀԱՄԻՏԻՅԵ ԲԻԻՐՏ ՀԵԾԵԼԱԳՈՒՆԴԵՐԸ.—«Լա Թիւրքի» հետեւեալը կը գրէ. «Ցաւալի է թէ քաղաքական ի՛նչ պարագաներու մէջ կապուեցաւ Բիւրտ հեծելազօրքը՝ Համիտիէ անունով։ Ուզուած էր անոնցմով ուս խաղախներուն նման հեծելազունդեր կազմել։ Բան տարիէ ի վեր այս գունդերը ո՛չ մէկ օրէնքի եւ ո՛չ մէկ կարգապահութեան կը հպատակէին։ Դ. զօրաբանակը, որուն իրաւասութեան տակ կը գտնուէին, ո՛ւր է ազդեցութիւն չունէր իրենց վրայ։ Իրենց պետերը երբ իրենց մարդոցմէ մէկը պաշտպանելու չփոթութեան մէջ գտնուէին, ուղղակի Ապտիւլ Համիտի կը հեռագրէին եւ իրաւէ մը անմիջապէս կը հրամայէր որ ազատ թողուի ան ո՛ւր է հետապնդուած թենէ։ Բան տարիէ ի վեր, անոնց այսպէս գայթակղանքի կիրաղով անպատիժ թողուելը հիւսիսային Անատոլուի աւերումներուն պատճառ եղած է։ Ապտիւլ Համիտի ազդեցութեան վրայ յենած, այս վարկաւորները կողոպտեցին բոլոր նահանգները որոնք երբեմն ա՛յնքան հարուստ եւ ծաղկեալ էին։ Իսկամ եւ Քրիստոնեայ ամէնքն ալ սեւ թշուառութեան մէջ ինկան։ Այս է պատճառը որ հիւսիսային Անատոլուի չորս նահանգները չենն կրնար տուրք հատուցանել կառավարութեան։ Ընդհ. սպայակոյտի մէջ որոշման հանձայն, այս անկանոն հեծելազօրքը պիտի վերակազմուի կատարելապէս եւ Դ. զօրաբանակի հեծելազօրաց մաս պիտի կազմէ։ Հեծելազօրաց ընտրեալ սպաներու կողմէ պիտի մարզուին եւ կրթուին, եւ վատաութիւն չներշնչող տարրերը դուրս պիտի հանուին։ Իսկ իրենց այժմու սպաները որոնք զինուորական ո և է ծանօթութիւն կամ կարգապահութիւն չունին, պիտի փոխուին։

ՀԱՄԻՏԱԿԱՆ ԴՈՒԻ ՄԸ.— «Օսմանիչէք Լույս» կը գրէ թէ վերջին դէպքերու մէջ մեղսակից եղողներու հարցաքննութենէն կ'երեւայ թէ Սելանիկի զինուորներու ժամանումէն քիչ առաջ, Եըլտըզ հրամայած էր Պոլսոյ մէջ գտնուող բոլոր «մէքթէպլի» սպաները կոչուել։ Երբ մէկ քանիներ առարկեցին թէ կարելի չպիտի ըլլար մէկէն դանդանել «մէքթէպլի» և «ալայլը» սպաները, իրենց պատասխանուեցաւ թէ մեծ դժբախտութիւն մը չպիտի ըլլար եթէ «մէքթէպլի»ներուն հետ մէկ քանի «ալայլը» սպաներ ալ սպանուէին սխալմամբ։

(*) Այս այն խռովարար Ամիր-էլլան է որ յիշուած էր Անտիոքի մեր թղթա՛կցին նամակին մէջ, նամանաւանդ՝ Սրամայրի ուղղուած նամակի մը մէջ, և. որ վերջերս ձերբակալուեցաւ Հալէպի մէջ։ Դարձեալ այս ուէաքսիսնէռ Ամիր-էլլանը եղած է Ֆէնսաfhառանը Միլլէրի նախագահը։

ՕՍՄԱՆԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՄԵԾ ՑՈՒԼԱՐԱՆ ՏՈՊԱՏՐԱԿԱՆ ՏԱՐԻՑ

Սիրելի, Իւլավէնսիկեան փողոց,
Թրամվայ ճառէսի Թիւ 18։

Տպարանատէրերը՝ զիր հալթայքեալ գծատարութենէն, գնոյն ազատենէն, չուտով մաղելէն եւ երբեմն տաքէն տանջանքն ձուլելէն կը գանգատէին։ Այս գանգատներուն բոլորն ալ նպատակ սուրով, «Օսմանեան Ընկերութիւն» անուանով մեծ ձուլարան մը հիմնած է Կ. Գալաթա, Սիրքէճի, Հաճա Բաշա, Իւլավէնսիկեան փողոց, Թրամվայ ճառէսի, թիւ 18, ուր կը պատրաստուին տանէն լիզուէ եւ իրա ճաշակաւոր տարեր։

Նորագոյն գայտ եւ վերջին վերագրաված արուեստագէտ մը Ֆրանսայէն նորանոր մեքենաներ ժողովեր, գեղագիրներ, Հայերէն եւ Թուրքերէն տանէ բանթոյի վրայ գիրեր գեղագրած եւ այս գիրերը վարպետներու կողմէ «չէլիկի» վրայ փոխագրուած են։

Գիր ձուլելու սարքն Կ. Գալոյ են ճարտար եւ արուեստագէտ վարպետ մը տա քնիրոված ըլալով, մեքենալը սարքելու ձուլարաններու պէտ ալիներու լի ձգելով, ինք անձամբ գործին գլուխը կը գտնուի։

Գիրերը՝ երկու տեսակ մեծագէ ձուլել սովորական եղած է, բայց գիմանալու եւ ճաշակաւոր ըլալու համար, երբոր գիրգ մեռաղ մ'ալ կը տրուի, եւ ծանրքէ չի վաղնելով, այս մեռաղներուն անանէն լաւը եւ ամենէն մաքուրը կը գտնուի ծանուն եւ յանձնորոց գիւրութեան համար գիներն ալ խիստ չնչուած են։ Գաւառի յանձնարարութիւնք չուտալիք եւ անթերի կը կատարուին։

ՅՈՒՐՔ. ՅԻՐԻՊԷՆ Լ.Ց. ԲԱՑԻՊԵԼԱՆ

ՆԵՐՔԻՆ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ ՄԱՍՆԱԳԷՏ

Ամերիկեան բժշկական հանրապետութենէ ներքին հիւանդութիւններու մասնագէտ Յուրք. Յիրիպէն Լ.Ց. Բացիպելան Ամերիկեան եւ Անգլիական նորագոյն մեքենաներով կ'փորձարկեն եւ ըստ այնմ կը դարմանէ։ Ծրանկարի մեքենայ ալ նորանոր գործիքով ողջ վիճակի մէջ կը տեսնէ եւ կը կիրարկէ հեշտաւոր մասնագէտ Բրօք. Կոչէր հնարած չինուկը, որուն ուժիկ ազդեցութիւնը Մէն-Լաւ հիւանդացին մէջ նոստատուած է։

Ամեն առաւօտ մինչեւ ժամը 3, իրիկունները 10էն վերջը եւ կիրակի օրերն ալ մինչեւ ցորեկ Բերա, Ագասաֆի, Ս. բրատաֆի փողոց թիւ 4 իր բնակարանը հիւանդ կ'ընդունի։

ՅՈՒՍԱԿ ՀԱՆԳԱՆԱԿՈՒԹԵԱՆ ՆՊԱՍՏԻՒ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎՈՒՆ

	Ղ.	Բ.
Մինաս Տիմիճեան	10	20
Կարապետ Դալուսեան	10	20
Օր. Տիգրանուհի Տէմիրճիճեան	10	20
Մարկոս Տարագճեան	10	
Տիմին Մարիամ Գէրեան	10	
Գրիգոր Թամարճեան	10	
Գեորգ Խաչատրեան	10	
Տիկ. Նուբի Զամարճեան	10	
Աստղիկ Հայրեան	10	
Տիկ. Մարիամ Կեօյճէճեան	10	
» Հայկանուշ Գէորգեան	10	
Այլեազէր	10	
Արսէն Գէրպէրեան	10	
Յակոբ Գասարճեան	10	
Յովհաննէս Զրլեկիճեան	10	
Մարգարոս Գոճանեան	10	
Սեդրակ Զագճեան	10	
Յակոբ Թազիրեան	10	
Բարսեղ Աբարեան	10	
Կարապետ Զերճեան	8	20
Մելքոնի Զերճեան	8	20
Գարեգին Գարագուսեան	8	20
Տիկ. Արաքսի Գէոլունեան	8	10
Յակոբ Յակոբեան	8	
Սիրեսս Էգիմեսրեան	7	10
Գրիգոր Գարայանրեան	7	20
Տիկ. Մարգրիտ Քիւրճեան	7	20
Բարսեղ Մարգարեան	7	20
Զէնգիս Գալէնտրեան	7	
Տիկին Սեւրի Գէոլունեան	6	10
Մինաս Սէմէրճեան	6	
Մանուկ Մանուկեան	5	10
Թորոս Վարդանեան	5	10
Յարութիւն Քէրճեան	5	10
Կիւլլապի Եղեմիճեան	5	10
Մինաս Տէմիրճեան	5	10
ՈՉ	5	10

(Շարունակելի)

ՇՈՒՐԱՅԻ ԳԱՀԻՐՃԷՏԷՆ

Գոյները սալի ալիք բանուգ իւս թիւնին նշանք եւն, նշանք բանուգ տարեր ինչուն նամագ գիլիմի.

Թուլի տարեր	վեր են սղղելիի տարիքի	տարիքի	մարիքի դրոշ տարս.
250	120	1	300

Գիներ տաքալ ֆր 30

Երբ Գոյների սալի ալիքը էթի բանուգ պիր եուն վե իւրիւ թեգալ եուն տարեր ինչուն նամագ գիլիմի.

Թուլի տարեր	վերեն սղղելիի		
տանիքի տարիքի	տարիքի	տարիքի դրոշ	տարս.
250	120	2	100

Գիներ տաքալ ֆր 39

Տարիքը Գոյրլենէ մրնպալեա իտիլենեբ օլան պալամէ մուհարրիրը նամագ գիլիմլերը գիլիլերինաե մուրաղդում ֆր. լոր ինի թալեպի եօնտանում յուլուգ. Բուսը մայիրը 13ինեն չարեշանի գիրնու ագալարնա դատար գեր գոշ դիր. բէնգիլ էտիլերե պիւնդալ եկիմը մեղգիրաե գարարը եվելեր վե 20ոեր չարեշանդի գիրնիր ագալարարի 100ոե 3 թէնգիլ գալալիլեր գարարը գարիտի էրա օլանագ մուրարդիր գալանարդանան, բենգիլեր ֆիտիրիս էրարա վե ալրանարը սիրնագան պալանան գալան գիրնիլերինին ան էրանանրա լեպ օլանարը՝ թեսիրաթ ագնիլերինի վե եա սիրթեգեր գեթիլեցնում գիլերի սիւսթանէպեն Շուրալ Գահրիյե Լեվանդ ասարեպին գեր. գիլերինե իլան օլանարը։

5 սալիս 825 3—1

ԵՐԱՆ ՀՕՐ ՄԷՋ ԱՍԱ ԻՐ ՈՐԴԻՆ

Սրդիս-Հայրը, Կուզիս յարարելութեան սանալ այնպէսի վանաման մը հետ որ գարնայ իմ պիտոյքս հոգալ մասնավոր հարերով, իմ շատած ամսական ասսատ գումարին համամասութեամբ։

Հայր-իս փոքրաութեամբս կրնայաեա որ ուզղակի Հաճի Շարին, վանաման գիսս Գ. Գոլոս Մատսա Փաշայի փուսին գէս Մեծ-Սելոզ թան թիւ 16, ուր կրնաս գտնալ պարտաս եւ յանձնարարական հարցուսա, կօշէլ ինչպես նաեւ զուլոյ ֆանչլա եւ ամէն տան անկրաժշտօրէն գէնքեր գաղալ բաս, 100ին 80 գանէրկ եւ մասորդն ասսատ եւ գայ շարթաս էան սանավարներով։ Հաւատ, չտա գոն պիրի մուտ այդ վանաման ուրոյ պարգելա գարտանութիւններեն։ 30— 24

ՆՈՐԱՁԵՒՈՒԹԻՒՆՆԵՐ

ԳԱՐՆԱՆ ԵՂԱՆԱԿԻՆ

ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ՊԻՏՈՒՈՔՆԵՐ

ԿԸ ԳՏՆՈՒԻՆ

ՇԹԱՑՆ

ՎԱՃԱՌԱՏՈՒՆԸ

ԱՐԵՒՄԵԼԳԻՐ, ԱՄԷՆԷՆ ՄԵԾ ՀԱՆԴԵՍՆԵՐՈՒ ԵՒ ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐՈՒ

ՄԵԾ ՀԱՆԴԵՐՁԱՎԱՃԱՌ

Ծարիներ ի վեր ծանօթ է Թոփալեան խան

ԳԻՐԳՈՐ ԷՖ. ԵՐՄԷՆԵԱՆ

ՄԵԾ ՀԱՆԴԵՐՁԱՎԱՃԱՌՈՒՆ

այս տարի գտարտած է ձմեռուան յատուկ գերգոտներէն շէջ եւ տարուան կոգուտներ ինչպէս

ԲԱԼԷՔՆԵՐ

ՄԵԾ ԵՒ ՏԼԱՒ ԹՈՍԻԻՄՆԵՐ

մեծ եւ տլաւ թոսիիմներ

ԳԻՆԸ ՈՐՈՇ Է ԹԻՒԸ 2 ԴՐՈՒՇ

Սուլթան Համամ Թոփալեան խան թիւ 36

SANTAL SALOLÉ LACROIX

ԳԱԲՍԻԻԼՆԵՐԸ

Միջոցին զորձարանի հիանդութեանց դէմ գործածուող հականեխիչ դեղերուն ամէնէն ազդուն և ամենալաւ իւրացնելին է։

Վաճառատեղին՝ դեղարան Լաքրուա, 31, Rue Philippe-de-Girard, PARIS.

Կրկնակուսի ամէն դեղարաններու մէջ։ Ներկայացուցիչ՝ Օլանեան, Թալիբան։

ՕՍՄԱՆԵԱՆ ԶԻՆԱՎԱՃԱՌ

ՄԿՐՏԻՉ ՓՐԻՆԿԵԱՆ

Գ. Գոլոս, Սուլթան Համամ, Մէսսաֆէ խան, թիւ 29, 30, 31, 32, 33։
Մասնաճիւղ, Եէնի ճամի, Էսքիսանլը սիրաճի Էքրոսը շիւրեսի թիւ 54։



Վաճառասանը եւ մթերանոցը մեկ ամէն տեսակ զէնքեր եւ կողոպտիչ դարասս գտնուելն, կարող են՝ թէ մայրաքաղաքի եւ թէ մասնաւորաբար գաւառի յանձնարարաց հայթայթել գիւրութեամբ եւ գիւրատաւելի գիներով։

10-20 կամ հրացաններ եւ իրենց կապարներ բազմացեալ տեսակ մը 5-10 Օսմ. ատկայ կանխավճարով կը հայթայթուի, որոնց տրուած ամէն յանձնարարութիւնք ճշտիւրէն եւ փութով կը կատարուին։

Փոփոխուող գիներու ցուցակը կը զրկուի 20 փարայի թղթարէն իրը նամակագրական նամակ։

Ամէն գրութիւնք դիւրք է գրել՝ Մ. Ֆրինկեան, Սուլթան Համամ, Մէսսաֆէ խան թիւ 29-33, Ներկայ դիմելով գրասենեակին նամակագրելը։ 20—1

ՏԷՕՇԷԼԷ ՕՐԻԱՆԹ ՊԱՆՔԷ Ա.Կ

ԿՕՐԼԻԿ, ՀԱՄԳՈՒՐԿ, ԹԱՆԷԼ, ԴԱՍԱՎԼԱՆԴԱ, Կ. ԳՈԼԻՍ, ՖՈՐՈՒՍԱ, ԱՂԵՔՍԱՆԴՐԻԱ, ԳԱՀԻՐԷ

Գոլոյ Դերմ. ընդհ. հիւպատոսարանին մէջ արձանագրուած 1906 Յունվար 31էն

ՀԻՄՆՈՒԱՄ

Տրէգտերը Պանքի, Ա. Շաֆհաուզենէյէ, Պանք Տէրմրիի եւ Նորթոնալ Պանք Տիւա Տէօյչանամ կոմէ։

Կեդրոնատեղի՝ Ղալաթիա, Վոյվոտա փողոց, Յակոբեան խան։

Գործակալութիւն Գոլոյ՝ Տիլսիզլուսէ խան։

Ագրանաց մթերանոց՝ Կիւլլէնկան խան Սիրքէճի։

Գործառնութիւններ կը կատարուին ամէն օր ժամը ինն առաւօտէն մինչեւ երեք։

ԳՈՆԴԱՐԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ ՀԱՐԿ

Տէօյչէ Պանք իր խնայողական Մնասուկին մէջ պահելու համար գումարներ կընդունի եւ 3½ 0/0 տոկոս կը վճարէ որ եւ է գումարի համար, պայմանս որ 1000 Օսմ. ոսկին չանցնի։ Իսկ 3 0/0 տոկոս 1000 Օսմ. ոսկիէն մինչեւ 2000 Օսմ. ոսկիին։

Սակայն գրասենեակը իրեն կը վերապահէ դիմել կամ ուզնել տոկոսին տարբերութիւնը, այդ մասին տեղական թերթերուն մէջ ազդ մը հրատարակելէ վերջը։

100 Օսմ. ոսկիէն վար եղող գումար մը կարելի է եւ ասոնց իսկ 200 ոսկիէն ուելի եղող գումարներ եւ ասոնցու համար, պէտք է դիմումը տեղեկացնել։—

8 օր առաջ մինչեւ 1000 Օսմ. ոսկիոց գումարի մը համար

30 օր առաջ 1000 Օսմ. ոսկիէն ուելի եղող գումարներու համար։

Տէօյչէ Օրիանթ Պանք ամէն տեսակ յանձնարարութիւններ կընդունի Գոլոյ եւ արտասահմանի համար, բացառապէս նպատակաւոր պայմանին ով։

Ո եւ է վճարում չի պահանջուիր ասոնցմէ ասրան համար այն արժեքագրերուն պահանջման, որոնց իր մէջ ինչուան գնուած են։

ՍԻՆԿԷՐ

ՀԱՍԹԱՍԹԻՂ ԿԱՑՍԵՐԱԿԱՆ ՊԱԼԱՏԱՆ

THE SINCER MANUFACTURING Co

ՄԵՔԵՆԱՅԻՆԵՐ ԲՈՒԼԱՆԴԱԿ ԲԻՒՐՈՅԻՆ ՄԷՋ

Սինկէրի գործարանները գտան անգլ. պղպջաքի լիանան ելլալով, իրենց ապրանքներուն տրցան գնահատած են որ ալ թարգէ ամէն կողմ ասրարանան ենդ ի բոլոր ցանցերէն, գերեզմանէրի եւ գոշկարարների իրենց Սինկէրի մեքենայ սկսած են գործածել։ Սինկէրի մեքենայ սկսած են գործածել։ Սինկէրի մեքենայ ասրան 1906 տարի պատանաց վերարանան ի տարի դրամ տարան ի բոլոր ցանցանդանները մէջ։

ՄԱՆՐԱՄԱՍԻՆԵՐ ԲՈՒԼԱՆԴԱԿ ԲԻՒՐՈՅԻՆ ՄԷՋ

Սինկէրի մեքենաներուն վաճառքին համար, Շեւնան համար, Կոլոնիայի գլխ.

ԲՈՒՐԱ Շեւնան համար. Գալաթա, Գոնամ Մարտէ գլխ., Թիւ 345 և 348։

ՍԷՆԷՄԱՏԻՆ (Սուլթան Համամ, Թիւ 2։

ՍՏԻՄԲՈՒԼ (Սուլթան Գալաթա, Բրուսվերիլ-Թոսթոնի գլխ., Թիւ 13։

ՍԻՆԻՆԷՐ Հարի Գոլոս Թիւ 120։

Կանգնուած գրաւանները համար վարի հասցէին։ Ուսանելու բրոշիւր։

Հիմնարկութեան գլխաւոր վարչատեղի՝ Գալաթա Բերա, Գնիստ-Ճամի, Թիւ 345 և 348 Լիրէն. Տիւրգլու Սարքիս գրէտ տանը։

ԼԱ ՄՈՒԹՈՒԷԼ ԴԷ ՖՐԱՍՍ Է ԴԷ ՔՈԼՈՆ

La Mutuelle de France et des Colonies

ՓՈՓՈԽԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ԳԱՆԳ ՏԷ ՖՐԱՆՍԻ ՄԷՋ ԱՒԱՆԴԱԳՐՈՒԱԾ Է 60 ՄԻԼԻՈՆ ՖՐԱՆԿ

ԿԷ ԴԱՐՄԻ — ԿԵՏԱԿԱՆ ԿՈՆԹՐՈԼԻՆ տակ, 1906 մարտ 31էն օրէնքին համաձայն

ԿԱՊԱՐՈՒԱԾ — ԴՐԱՄԱԳԼՈՒԽ ՄԷՋ ազգ մեծագոյնները, եւ ԴՐԱՄ ՍԺԷՏ եւ ԹԱՆԿ ՎԻԱԺԷՒ Կ'տպահովէ, 15 տարիէն վերադարձ ազգ մեծագոյնները, մասնաւոր պարագային երաշխաւորութիւններով։

ԿԱՆԽԱՎՃԱՐ — Վճարանիր ԱՄՍԱԿԱՆ ՎԵՑ ՏԱՐԻՆԷՆ սկսեալ

ՊԱՆՔԷ ՏԷ ՖՐԱՆՍԻ ՄԷՋ իր յանձնարարութեան յանձնած գրամները, պահական երաշխաւորութիւն ունենալով տարեկան վերադարձով։

ԳԱՐՄԱՆԱԿԱՆՈՒԹԻՒՆ — 700 ՄԻԼԻՈՆ ՖՐԱՆԿԻ, մինչեւ 1906 նոյեմբեր 30 իր ԻՆԹԻ ՊԻՆԵՑԱԾ Է։

Տեղեկութիւն եւ կանոնագիր ձրիաբար կը տրուի

ԱՐԵՒԵԼԻՔԻ ԱՆՆԱՆՈՒՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Հիմնուած Ֆրանսայի Խորհրդի Մ. Տանկերիա, Տիւրգլուի խան Նարթիոյ

Փոքրաւոր եւ դիւրանալ գործակալներ կը փնտռուին, որոնք պիտի ունենան ստանալու յանձնարարական ոսկի

ՆՈՐԹՔ ՊՐԻԹԻՇ ԷՍ ՍԷՐՔԵՐՆԱԼ

ԵՒ

ՆՈՐԹՔԸՐՆ

ՀՐԿԷՆԻՔԻ ԿԵՆԱՑ ԱՆԳԼ. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ընդհանուր գրամագլուխ 6,000,000 ֆունտ

Ստացուած գրամագլուխ 1907 տարուայ 5,941,359

Պահեստ գրամ 1907 տարուայ 25,285,824

Գլխաւոր գրասենեակ՝ Լոնդոն, Ֆենչրչ Սթրիթ 61

Գլխաւոր գործակալ՝ Գ. Գալոյեան

Գ.Գ.Ն.Ի.Ն ՄԻՐՈՒԹԵԱՆ ԵՒ ՍԻՐԴԻ

Գալաթա, Ճիլ Բաղչա խան, Նշանքիր

Գաւառաց կարգաւորութիւններ համար տարբերի գործակալներ կը փնտռուին։

ՄԱՐԹԱՑԻ

ՕՍՄԱՆԵԱՆ ՍՊԱՀՈՎԱԳՐԵԱԼ ԲԱՆԿԱՐԱՆԱՏՈՒՆ

Դրամագլուխ 600,000

Պահեստ դրամ 95,000

Գլխաւոր գրասենեակ՝ Գալաթա, Գալաթա Գոնամ Մարտէ գլխ. Թիւ 1։

Գլխաւոր գործակալ՝ Գ. Գալոյեան

Գ.Գ.Ն.Ի.Ն ՄԻՐՈՒԹԵԱՆ ԵՒ ՍԻՐԴԻ

Գալաթա, Ճիլ Բաղչա խան, Նշանքիր

Գաւառաց կարգաւորութիւններ համար տարբերի գործակալներ կը փնտռուին։

ԲԵՐԹՕՆ ՄԱՆԶՈՒՄԷ-Ի

ՍՄՐԱՏ ՐԻՐԻԱՏ

(209)

ԲԱՆՏԷ ԲԱՆՏ

ԵՐԷՍԱՐԴԻ ՄԱՍ

ԵՐԿ.

—Խնդրեմ, Գէ՛ր, մի կասպէք, եւ լրջօրէն կը յայտարարեմ թէ՝ իմ բան չէ, զուտ պէտք է հաւատաք, տ՛ւ ուրիշ բանիկ չունիմ.

—Հաւատամ՝ ը, յարեց հարցապետը, Երիտասարդին խրախ չեղնարէն իսկա. էս ազդուած, համզուեցայ թէ զուտ չէք գրած, այլոյնքն ձեր ձեռագիրը չէ, բայց չի՞ կրնար ըլլալ որ զուտ եղած ըլլաք սատ հեղինակը...

—Այդ կասպէ՞ն գէ՛մ ալ կը բաղաքեմ,

—Շա՞տ լաւ, ենթադրե՛նք պան մը թէ՝ զուտ չէք հեղինակը, վստահ՛նք ձեր անկեղծութեան վրայ, ինչպէս որ վստահած ենք ձեր գրական կարգութեան վրայ, տեսեալ, անցամ մը կարդացէ՛ք, լաւ մը գննեցէ՛ք և թարգմանեցէ՛ք մեզի։

Երիտասարդին ճարը կամաց կամաց կը հանէր, փախուստի ելքերը կը զննուէին ամէն կողմ է, ճնշումի չրջանակը տակաւ կը նեղնար, չտարան, թուղթը ձեռքը ուշի ուշով քաղել կը սկսէր գրուածքը. յետոյ գլուխը վեր առնելով, կեղծելու, բանդարանի մէջ մը չրթունքին ծայրը, խորհրդաւոր ձեւ մը տալով նայուածքին.

—Այս գրուածքը՝ նոր ժամանակուան գրագի մը չի կրնար ըլլալ. մենք երկու լեզու ունինք, հին եւ նոր, ասիկա հին լեզուին ուելի մոտ է, ասկէ յետոյն տարի տակ կը գտնուեր այս լեզուն. այս գրուածքը նոր չէ, հին է.

—Շա՞տ ազէկ, չա՞տ ազէկ, հին թա՛զ ըլլայ, յարեց հարցապետը, նեղուրա ու արտաքոյ մարդու մը շարժուձեւով, կարդացէ՛ք ու թարգմանեցէ՛ք, մի՛նք ալ հասկնանք ի՞նչ գրած է։

Երիտասարդը բան, վերջին ելիզ մը ալ փարեց չի կարդալու, բայց հարցապետը կը պնդէր, տեղի տալու նշան մը ցոյց չէր տար. հետեւաբար ինքը տեղի ունեցաւ տեղի տալ ու կարդայ.

Հինգ տեւ գարեր սղղերին հայ տրեսոր
Հայ ալիարնը՝ խուժդուժ ցեղեր ապտամբ,
Ակ, այդ խուժանը բարբարոս ու վայրագ՝
Մեր օջաղ մոխիր դարձուց, տարա՛կ...

Հերիկ, հերիկ լանգ ու կոծնեն,
Եթէ մարդ եիք, ո՛ն, հալանե՛նք
Այդ վոնտանիները բարբարոս,
Հա՛ս ենք ծներ ու մեռնի՛նք հոս...

—Է, ի՞նչ գրեր է, հարցուց հարցաքննիչ հարցապետը, որ ընթանալու բան մը չէր հասկնար, մինչդեռ մէս մարդվանները կը սպասէին որ թարգմանուէր.

—Բան մը չի հասկնաս՞ր, ըսաւ Երիտասարդը, ասանց մտանելու իր նեղրի փաթարիեր, չա՞տ խրթին գրուած մը է.

—Հոգ չէ, հոգ չէ, ա՛րլաթ որ կրնաք հասկնալ, մեզի՛ ալ հասկցուցէ՛ք.

—Հաւատացէ՛ք, պէ՛ր, ինչպէս որ ըսի, շատ խրթին է. գրեթէ անհասկնալի.

—Ինչ կը լսինք, զարմանալ տեղէն Սալին, որ կատարելութենէն պիտի ճարթէր, մի՛ պնդեր, յայտնի եղաւ, հարկաւ իր գործին չէ՛ դար թարգմանել.

—Ներեցէ՛ք, նախագա՛հ բարոյ, տեղէն ցատկեց զարրացած, ներեցէ՛ք, որովհետեւ կը հարցաքննուիմ, միւթեարրեթի բարոյին մի՛ զամանութիւնը չեմ հասկնար.

—Հանգարտեցէ՛ք, հանգարտեցէ՛ք, տարեց նախագահ բարոյն, նստեցէ՛ք ի՛ տեղը. ազա՛ս, իրա՞ւ չէք կրնար թարգմանել.

Ցեւոյ, գանալով հարցաքննիչ հարցապետին,

—Գէ՛ր, ըսաւ, հոգ չէ՛, թողուցէ՛ք այդ գիրը, ուրիշ թուղթեր ալ կան, անոնց թող կարդայ.

—Այդ թուղթը ձեզինքդ, ըսաւ հարցապետը, միւսը կարդայէ՛ ներկայ, ա՛ի ալ չէք հասկնար.

Դիւանագիրը թուղթի կարը մը ալ երկրորդ Երիտասարդին, որ առաւ զայն ու սկսաւ կարդալ.

ԶԵԹՈՒՆԻ ԲԱՑԼԵՐԴ

Հայո՛ց տարիներ,
Տարրի լերաց
Ազա՛ս արքիներ,
Դայի՛ր փառապանծ...

Երիտասարդին ճակատէն քրտինքը կը հոսէր ուզիորէն, ա՛լ չէր կրնար առանց տանել ընթերցումը։

—Հազարապո՛ տէր, ըսաւ վճռական ձայնով մը, բան մը չեմ հասկնար այս գիրէ՛ն ալ, ի՛տալեմ, եթէ կարելի է, մասնաւոր թարգմանչի մը յանձնեցէք այս գրուածքն հերուն թարգմանութիւնը։

—Զնեմ դատ ա՞վ կը ճանչնաք Մարաշի մէջ. ըսէ՛ք, անոր յանձնենք.

—Ես մարդ մը չեմ ճանչնար, կատարեալ պաշտօնեայ մը չիքա՞ Հայերէն, առանցմէ մէկուն յանձնեցէ՛ք. ես արդէն յայտնեցի կարէ՛ք, շատ հին կը թուին, թերեւս տիսուն վարեան տարի առաջ գրուած են.

—Շա՞տ ազէկ, ո՞վ կը կարենա թէ գրած ըլլայ. Զեթունի մէջ կը ճանչնա՞ մարդիկներ, որոնք այդ լեզուով գրելու կարող ըլլան։

—Զնա՞մ ճանչնար։

—Ազէ՛կ մտածեցէք, ձեր յիշողութեան դիմեցէ՛ք։

(Շարունակելի)